Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

325.3
4-23

325.3
4-23
15663
15 JAN 2010
100

Կ ԿԱՈՒՑԿԻ

ԿՈԼՈՆԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՆՑԵԱԼՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Թարգմանութիւն

Ռ. ԽԱՆԶԱՏԻ

300
1395-4Ա

ԹԱՒՐԻԶ

Ատրպատականի Հայերի Թէմական Արագատիպ
ՅԻՇԱՏԱԿ ՎԱՂԱՄԵՌԻԿ ԵՂԻՍԱԲԷԹ ՄԻՐԶԱԲԵԳԵԱՆՑԻ

1904

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԷՄԱԿԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ
ԾԱԽԻՈՒՄ ԵՆ **ԱՏՐՊԵՏԻ** ԵՐԿԵՐԸ

ՎԻՊԱԿԱՆ

ԱԼՄԱՍՏ Թրքահայերի կեանքից երկրորդ տպագրութիւն
Երկու հատոր, իւրաքանչիւրի գինն է 1 ր. 5 զռ.
ԽԵՒ - ԿԱՐԱՊԵՏ. Թրքահայ. կեանքից „ 1 ր. 5 „
ՋՈՒ - ԵՂԻԿ „ „ „ 30 կ. 30 շհ.
ՇԽՆԱՍ „ „ „ 30 կ. 30 շհ.
ԺՐՈՒՄՆԳՆԵՐ „ „ „ 30 կ. 30 շհ.
ԲԼԷՍՍԻ ԸՌԱՔԼԸ „ „ „ 25 կ. 25 „
ԹՈՒԼՈՒՄԲՐՋԻՆԵՐ „ „ „ 10 կ. 10 „
ՎԻՒՔԵԲԼՈՒՅԻ ԴԱՂՏՆԻՔԸ „ „ „ 1 ր. 5 „
Ընտիր թղթի վրա 2 ռուբլի—կամ 10 ղռան
ՋԱՒՐՀԻՐ 77-8 թ. Ռուս Թուրք կռուից արկած 1 ր. 5 զռ.
Ընտիր թղթի վրա 2 ռուբլի—կամ 10 ղռան
ՊԱՏԿԵՐՆԵՐ Թրքահայերի կեանքից 1 ր. 5 զռ.
Ընտիր թղթի վրա 2 ր. 10 զռ.
ՎԻՊԱԿՆԵՐ Թրքահայերի կեանքից 1 ր. 5 զռ.
Ընտիր թղթի վրա 2 ր.—կամ 10 զռ.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՇՈՒՇԱՆ Երեք արարած. Թրքահայ կեան. 1 ր. 5 զռ.
ՍԵՐԲԵՔ Հինգ „ „ „ 30 կ. 30 շհ.
ԽԱԼԻՖԱԹ Պատմական տեսութիւն. 30 կ. 30 „

Դիմել Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցը և Կովկասի քաղաքների հայ գրավաճառներին։
Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս.

TAURIS (Perse) ATRPET

Որոնց կը լինի սովորական 20 % զիջում։

4-22 0.50 5 7 10
27 SEP 2006

Կ ԿԱՈՒՅԿԻ

ԿՈԼՈՆԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՆՑԵԱԼՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Թարգմանութիւն

Ռ. ԽԸՆԱԶԱՏ

1003/12952
300
1395-կա
265
30

ԹԱՒՐԻԶ

Ատրպատականի Հայերի Թէմական Արագատիպ
ՅԻՇԱՏԱԿ ՎԱՂԱՄԵՌԻԿ ԵՂԻՍԱԲԷԹ ՄԻՐԶԱԲԷԳԵԱՆՑԻ

1904

20 MAY 2013

18028

800
ԱԻ-ՇԳԳ

ԱՐՏԱՏՊԱԾ Է

„Տարազ՝՝ Հանդիսի № 19—35, 1900 թ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հրատարակելով Կ. Կաուցկիի սոյն աշխատասիրութիւնը, յոյս ունինք, որ նա կգրաւի Հայ ընթերցողներին, որոնց խրախոյսը մեզ հնարաւորութիւն կտա համանման գործերի հրատարակութեան։

21 Սեպտեմբերի 1904

Թաւրիզ.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԷՄԱԿԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ
ԾԱԽԻՈՒՄ ԵՆ **ԱՏՐՊԵՏԻ** ԵՐԿԵՐԸ

ՎԻՊԱԿԱՆ

ԱԼՄԱՍ Թրքահայերի կեանքից երկրորդ տպագրութիւն
Երկու հատոր, իւրաքանչիւրի գինն է 1 ր. 5 դռ.
ԽԵՒ - ԿԱՐԻԳԵՏ. Թրքահայ. կեանքից „ 1 ր. 5 „
ՔՈՒ - ԵՂԻԿ „ „ „ 30 կ. 30 շհ.
ՇԽՆՈՑ „ „ „ 30 կ. 30 շհ.
ԺՐՈՒՆԳՆԵՐ „ „ „ 30 կ. 30 շհ.
ՐԼԻՍԻՒ ՌՈՒՔԻԼԸ „ „ „ 25 կ. 25 „
ԹՈՒԼՈՒՄԲԻՋԻՆԵՐ „ „ „ 10 կ. 10 „
ՎԻՒՔԵՐԼԻՑԻ ԳՐՂՏՆԻՔԸ „ „ 1 ր. 5 „
Ընտիր թղթի վրա 2 ռուբլի—կամ 10 դրամ
ՋԱՒՀԻՐ 77.8 թ. Ռուս Թուրք կռուից արկած 1 ր. 5 դռ.
Ընտիր թղթի վրա 2 ռուբլի—կամ 10 դրամ
ՊԱՏԿԵՐՆԵՐ Թրքահայերի կեանքից 1 ր. 5 դռ.
Ընտիր թղթի վրա 2 ր. 10 դռ.
ՎԻՊԱԿՆԵՐ Թրքահայերի կեանքից 1 ր. 5 դռ.
Ընտիր թղթի վրա 2 ր.—կամ 10 դռ.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՇՈՒՇՈՒՆ Երեք արարուած. Թրքահայ կեան. 1 ր. 5 դռ.
ՍԵՐԲԵՓ Հինգ „ „ „ 30 կ. 30 շհ.
ԽԱԼԻՓԱԹ Պատմական տեսութիւն. 30 կ. 30 „

Դիմել Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցը և Կովկասի քաղաքների հայ գրավաճառներին։ Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս.

TAURIS (Perse) ATRPET

Որոնց կը լինի սովորական 20 % զիջումն։

ԿՈԼՈՆԻԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՆՑԵԱԼՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒՄ

ԹԱՐԳՄ. Կ. ԿԱՈՒՑԿԻԻՑ*)

I

ԿՈԼՈՆԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Ներկայ յօդուածի նպատակն է մի պատմական տեսութիւն անել կոլոնիկան քաղաքականութեան զանազան փաղփանների քննութիւնը մեզ ցոյց կը տայ, թէ արդեօք այժմեան Գերմանիայի տիրող դասակարգերը ընդհանրապէս ո՞ր աստիճան ընդունակ են օգտակար կոլոնիական քաղաքականութիւն վարել, և թէ արդեօք ճիշտ է, որ երկրի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է անդրովկիանեան երկրներ գրաւել։ Ամենից առաջ մենք կը զբաղուենք XVII և XVIII դարերի կոլոնիական քաղաքականութեամբ. յետոյ կանցնենք XIX հարիւրամեակի քաղաքականութեանը և, վերջապէս մի առանձին յօդուածով, կը քննենք Արևելեան-ասիական հարցը։

Հետևեալ երեք պատճառները մղեցին Եւրոպացի այժմեան ազգերին նոր երկրներ գտնելու և, դրա հետ միասին, կոլոնիական

*) Կարլ Կաուցկի գերմանացի նշանաւոր քաղաքատնտես-սոցիոլոգներից է, որ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ամենահաւատարիմ աշակերտներից մէկն է համարուում ու նրանց փիլիսոփայական գաղափարների ամենազարգ թարգմանիչն է։ Նրա այս հակիրճ և շափազանց իմաստալից աշխատութիւնը լոյս տեսաւ անցեալ-1898 թ.- «ЖИЗНЬ» ամսագրի սեպտեմբեր և հոկտեմբեր №№ -ում, որտեղից և մենք թարգմանեցինք „Տարազի“ համար։

քաղաքականութեան հիմք դնելու. նաւագնացութեան տեխնիկայի զարգացումը, թիւրքերի յայտնուելը և եւրոպական երկրների բաղմամարդութիւնը: Այս վերջինը XV դարում անկախ ֆէօդալականութեան անկման հետեւանքն էր: Իսկ ֆէօդալականութեան այդ անկումը բազմաթիւ գիւղացիներին, մասամբ և ստորին ազնուականներին, զրկեց ապրուստի բոլոր միջոցներից և մղեց նրանց դէպի աւազակութեան ու արկածախնդրութեան:

Այսպիսի մի բազմամարդութիւն էլ մի քանի հարիւրամեակ առաջ խաչակրաց արշաւանքների պատճառ դառաւ, բայց XV դարում Արևելքի ճանապարհը փակւած էր թիւրքերով, որոնք քրիստոնեաներին դուրս էին մղել ոչ միայն Ասիայից, այլ և Միջերկրական ծովի բոլոր շրջակայքից և այդպիսով փակել էին Հնդկաստան տանող բոլոր հին վաճառականական ճանապարհները: Արևելեան Եւրոպայի ժողովրդի աւելորդ մասը այդ ժամանակ իր համար ելք դտաւ թիւրքերի հետ կռիւներ մղելու մէջ, մինչև Եւրոպայինը կրօնական պատերազմների համար զինուորներ մատակարարեց, այն կրօնական պատերազմների, որոնք, հուսիտների ժամանակներից սկսած մինչև Վեստփալեան դաշնագրութիւնը, պարբերաբար աւերեցին Գերմանիան: Իսկ ովկիանոսի եզերքում ապրող ազգերին բազմամարդութիւնը մղեց անդրատլանտեան երկրներ դտնելու և գրաւելու քաղաքականութեանը:

Թիւրքերը անկարելի դարձրեցին եւրոպական. ազգի տարածումը դէպի արևելք և Միջերկրական ծովից հարաւ: Բայց ճանապարհ մնացել էր միայն Ափրիկէի արևմտեան ափերի ուղղութեամբ և ովկիանոսից դէպի արևմուտք:

Ափրիկէի արևմտեան ափերի ուղղութեամբ նաւագնացութիւնը աւելի մատչելի և իրագործելի էր, քան թէ անծանօթ ովկիանոսի լայնութեամբ յանդուգն ճանապարհորդութիւնը: Փորթուգալացիները այդ կարգի ճանապարհորդութիւնների ձեռնամուխ էին եղել դեռ XV դարի սկզբներում: Շարունակ առաջ գնալով դէպի հարաւ, նրանք աւելի ու աւելի համարձակ էին դառնում, մինչև որ Ափրիկէի եզերքով պտոյտ անելու յանդուգն միտքը յղացաւ նրանց մէջ, որ և իրագործեցին ու այդպիսով Արևելեան Հնդկաստան գնալու ճանապարհ դտան: Գենուեզցի Կոլումբոսի արած սխալ հաշիւները—որը երկրագնդի իսկական մեծութիւնը աւելի փոքր էր համարում և կարծում էր, թէ Հնդկաստանի և արևմտեան Եւրոպայի միջև եղող տա-

րածութիւնը շատ չնչին բան է լինելու —սպանիացիներին սխալմունքների մէջ գցեցին: Այս հանգամանքների և Կոլումբոսի ձեռներեցութեան շնորհով սպանացիները, համրեա թէ փորթուգալայիների հետ միաժամանակ, սկսեցին Հնդկաստանի համար մի ուրիշ ճանապարհ փնտռել և այն ժամանակ, երբ այս վերջինները իրանց փընտռած ճանապարհը գտան, առաջինները անսպասելի կերպով Ամերիկա դուրս եկան:

Այդ վայրկեանից նորագոյն կոլոնիական քաղաքականութիւնն է սկսւում:

Զարմացած եւրոպացիների աչքերի առաջ հողային անհուն տարածութիւններ են յանկարծ բացւում իրանց առասպելական հարստութիւններով: Այս երկրներում, նախկին ծանօթ արևելեան երկրների—Փոքր-Ասիայի, Սիրիայի, Եգիպտոսի—հակառակ, այնպիսի անպաշտպան ցեղեր էին բնակւում, որոնց շատ հեշտութեամբ կարելի էր նուաճել:

Մի կատարեալ տենդ ընկաւ թէ սպանացիների և թէ փորթուգալացիների մէջ: Բոլորն էլ վազում էին դէպի կոլոնիաները, առանց աշխատանքի հարստութիւնների տիրանալու յոյսով: Թէ սպանական Ամերիկայում և թէ փորթուգալական Հնդկաստանում սոսկալի ու անլսնայ աւարառութեան սիստէմ էր մտցւած, ինչ ի հարկէ չէր կարող անվերջ շարունակւել: Արևելեան Հնդկաստանում փորթուգալացիների մշտական եկամուտի աղբիւրները կազմում էին ծովային աւազակութիւնը, ծովեզերեայ քաղաքների կողոպուտը և վաճառականութիւնը. իսկ վաճառականութեան գլխաւոր առարկաներն՝ էին քաղցրահամները, որ բերւում էին հնդկական կղզիներից ու շատ ընդունւած էին այն ժամանակներում, և հարուստ ու փառաւոր տոսպի բամբակէ և մետաքսէ կտորները, որ մեծ քանակութեամբ բերում էին Հնդկաստանի ծաղկած նահանգներից: Ամերիկան, ընդհակառակը, գրաւում էր սպանացիներին իր անսպառելի ոսկու և արծաթի հանքերով, որ ահագին հարստութիւններ էր մատակարարում նրանց հայրենիքին: Շատ յետոյ միայն սկսեցին այնտեղ զարգանալ *կոլոնիական ապրանքների*, այսինքն՝ շաքարի ու սուրճի մշակութիւնը:

Այդ երկու ազգերն էլ շատ խստութեամբ էին պահպանում, իւրաքանչիւրը իր կոլոնիաների հետ յարակցութիւն ունենալու մոնոպոլիան: Ոչ մի օտար մարդ չէր համարձակւի փորթուգալական

կամ սպանական կոլոնիաներում երևալ, ոչ մի նաւ, օտար դրօշակի տակ, չէր երևում փորթուգալական կամ սպանական ջրերում: Այդ երկու պետութիւնները իրանց մէջ բաժանել էին հին ամբողջ աշխարհը և որոշել էին օտարին թոյլ չտալ ներս մտնելու:

Կարելի է մտածել, թէ կոլոնիական այս յաջողակ քաղաքականութիւնը, որ ամենակարճ ժամանակի մէջ այնչափ հարուստ արդիւնք տուեց, պետք է ամենաբարերար ազդեցութիւն ունենար Պիւրենեան թերակղզու տնտեսական զարգացման վրայ: Սկզբում հենց այդպէս էլ թւում էր: Այդտեղ կենդրոնացած էին թէ հարստութիւնը և թէ իշխանութիւնը. Լիսաբոնը Եւրոպայի ամենահարուստ վաճառականական վայրը դարձաւ, իսկ նրա պետի առաջ, որի իշխանութեան սահմաններում երբէք արեգակը մայր չէր մտնում, խոնարհուեց համարեա թէ ամբողջ Եւրոպան:

Սակայն տարբերութեան նշանները շուտով երևացին:

Կոլոնիաներից բերուած հարստութիւնները ոչ թէ ժողովրդի ձեռքն էին անցնում, այլ ինքնիշխան միապետութեան և դրա ձեռքում գործիքներ դարձած, ազնուականութեան և եկեղեցու ձեռքը: Փորթուգալիայի թագաւորը իր պետութեան մէջ առաջին վաճառականն էր. նա իր օգտին էր մոնոպոլիա դարձրել պղպեղի վաճառականութիւնը, արևելեան Հնդկաստանի առևտուրը կարելի էր միմիայն կայսերական նաւերով անել և հարկաւոր էր ահագին մաքս վճարել: Վաճառականութիւնից ստացուած օգուտները ստանում էին թագաւորն ու իր արբանեակները, որոնք օգնում էին նրան էլ աւելի զօրացնել իր իշխանութիւնը. իսկ ժողովրդի համար կոլոնիաները մի կատարեալ բեռ էին, որ գնալով աւելի ու աւելի անտանելի էին դառնում: Փորթուգալացիների գրաւած ահագին կոլոնիական երկրները այնպիսի պահանջներ էին գնում մայր երկրի բնակիչների առաջ, որոնց այդ փոքրիկ երկիրը չէր կարող գոհացում տալ: Մինչ մի կողմից կոլոնիաներում ծառայելը ահագին թւով մարդիկ էր կլանում, միւս կողմից կոլոնիաները գնացող մարդկային ստւար հոսանքը գնալով նւազում էր պատերազմների, վարակիչ հիւանդութիւնների և նաւաբեկութիւնների շնորհով: Արդիւնագործութիւնը և հողագործութիւնը արհամարհած վիճակի մէջ էին թողած. բնակիչների թիւը նւազում էր. երկիրը իր անկման էր մօտենում, գնալով նա աւելի ու աւելի անզօր էր դառնում կոլոնիաները իր իշխանութեան տակ պահելու համար: Այդ պատճառով էլ այդ կոլոնեաների մեծ

մասը աւելի ուժեղ մրցակիցների ձեռք անցաւ:

Միևնոյն բանն էր և Սպանիայում, թէև այս պետութիւնը Փորթուգալիայից աւելի ընդարձակ էր և աւելի հեշտութեամբ կարող էր դիմանալ իր երկրի բնակիչների նւազելուն: Բայց մենք տեսնում ենք, որ այդտեղ էլ ինքնիշխանութիւնն է թագաւորում, ֆէոդալական և բիւրոկրատիական ինքնիշխանութիւնը, որ փոխանակ ազնւականութեանն ու եկեղեցուն ասպարէզից հեռացնելու, նրանց իր ծառաները էր դարձնում, արքունական ազնւականութիւն և արքունական եկեղեցի անւանելով նրանց, ու այդպիսով էլ աւելի է զօրացնում նրանց ոյժը: Հէնց այդ տարրերի օգտին էլ գնաց կոլոնիաներից ստացած ամբողջ եկամուտը: Միապետութիւնը, եկեղեցին ազնւականութիւնը ու բիւրոկրատիան հարստացան և սկսեցին իշխել ստորին դասակարգերին, չափազանց իշխել: Ոսկին ու արծաթը հեղեղի նման հոսում էին Սպանիա, բայց նրանք անհամար պալատականների, կղերականների ու աստիճանաւորների շռայլ ծախսերի համար էին գնում: Դրսից եկած դրամի շնորհով, կենսական մթերքների ու արդիւնագործական առարկաների գները թանգանում էին, այն ինչ աշխատաւորների օրավարձը դրա համեմատութեամբ չէր աւելանում, Գիւղացիները ու արհեստաւորները իրանց համար աւելի շահաւէտ էին համարում կոլոնիաները գնալ, կամ տներում սպասաւորութեան մտնել և կամ վարդապետ ձեռնադրուել. քան երեսի քրտինքով իրանց հացը ճարել:

Դրան միացաւ և այն հանգամանքը, որ կոլոնիաներից հասած հարստութիւնների շնորհով, ինքնիշխանութիւնը իրան բոլորովին անկախ զգաց. երկրի հողագործութեան և արդիւնագործութեան յաջողութիւնները կամ չաջողութիւնները նրա համար նշանակութիւն չունէին, և այդ պատճառով էլ, բոլորովին անտարբեր դառնալով դէպի աշխատաւորների ու հողատէրերի կարօտութիւնները, նա ամենախիստ կերպով սկսեց ճնշել ամեն մի ինքնուրոյն գործ: Ցաւալի է որ Փիլիպ երկրորդը Սպանիայից դուրս արեց արդիւնագործ ժողովրդի մեծ մասին — մաւրերին: Թէև, պէտք է ասել, որ արդիւնագործ ժողովրդի կաթոլիկ մասն էլ իրան մաւրերից աւելի լաւ չէր զգում ինկւիզիցիայի երկրում. հնարաւորութիւն եղաւ միայն նրանք փախչում էին Հոլանդիա և Իտալիա: Իսկ այս բոլորի հետևանքը այն էր լինում, որ հողագործութիւնը ու արդիւնագործութիւնը ընկնում էին և բնակիչների թիւը նւազում էր երկրում:

Միւս կողմից, կոլոնիական հարստութիւնները սպանական ինքնիշխանութեան հնարաւորութիւն տուին համաշխարհային քաղաքականութիւն վարել, մինչ մի կողմից կոլոնիական քաղաքականութիւնը ստիպում էր Սպանիային կարելի եղածին չափ մեծացնել իր ծովային ոյժը, միւս կողմից Հաբսբուրգների Եւրոպայի կիսում — Հոլանդիայում, Իտալիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում — ունեցած ցեղական շահերը, նրան անվերջ արիւնահեղ պատերազմների մէջ դցեցին, որոնց շնորհով երկիրը վերջ ի վերջոյ ամայացաւ և տնտեսականապէս բոլորովին քայքայուեց: Մինչև վերջին ժամանակներն էլ կոլոնիաները Սպանիայի գլխին մի կատարեալ պատիժ են. նրանք անհրաժեշտ սնունդ են մատակարարում այն զինուորական — բիւրոկրատական և կղերական կազմակերպութեանը, որը խոշնդոտ է հանդիսանում երկրի տնտեսական ու քաղաքական յառաջադիմութեան ամեն մի քայլին: Կոլոնիաների կորցնելը չափազանց պիտի թուլացնէ սպանական բեժիմի այդ տարրերին և, այդպիսով, Սպանիայի ժողովուրդն էլ կազատուի իրան ճնշող կոշմարից:

Բոլորովին տարբեր բնաւորութիւն էր կրում Հոլանդիայի քաղաքականութիւնը: 1477 թ Հոլանդիան Հաբսբուրգների ձեռքն անցաւ, որոնք 1504 Սպանիան էլ գրաւեցին: Բայց այդ երկու երկրների շահերը իրարու այնչափ հակառակ էին, որ չպիտի կարողանային երկար ժամանակ միևնոյն իշխանութեան տակ մնալ: Կարլոս Ե. հոլանդացիներին էր խնամակալութիւն ցոյց տալիս և այդ պատճառով էլ վատ յարաբերութիւնների մէջ էր սպանացիների հետ: Իսկ Ֆիլիպ Բ-ի քաղաքականութիւնը, ընդհակառակը, ամեն ժամանակ սպանացիների շահերն էր առաջ դցում: Հոլանդիայի իշխող դասակարգերը — ազնուականութիւնը, վաճառական դասը — յետ էին մղուած ասպարիզից և, որտեղ որ կարելի էր լինում, ճնշում էին: Եթէ նրանք չէին ցանկանում բոլորովին ճնշուել ու իրանց գոյութիւնը պահպանելու ամեն միջոցներից զրկուել, պէտք է, որ Սպանիայից բաժանուէին: Այդ նրանց յաջողուեց, դոնէ հիւսիսային նահանգներում, սոսկալի կռիւներից յետոյ, որ շարունակուեցին ութսուն տարի և վերջացան Վեստֆալեան դաշնագրութեամբ (1648 թ.): Ութսուն տարուան պատերազմը պակաս չընպաստեց Սպանիայի անկմանը. միւս կողմից էլ հենց այդ անկումը, որ գլխաւորապէս կոլոնիական քաղաքականութեան հետևանքն էր, փոքրիկ Հոլանդիային միջոց տուեց յաղթական կերպով ապատամբել Հաբսբուրգների զօրութեան դէմ:

Ծովային գործերի մէջ հմուտ Հոլանդացիները, պատերազմի գլխաւոր ոյժը ծովի վրա փոխադրեցին և իրանց համար նպատակ դրեցին սպանացիների ծովային զօրութիւնը ոչնչացնել: Քանի նը-- բանց նաւատորմիղը սպանացիներից աւելի էր զօրանում, այնքան աւելի էին նրանք ձգտում կոլոնիական երկրներ նուաճել: Բայց զարմանալին այն է, որ նրանք նուաճում էին ոչ թէ սպանացիների կոլոնիաները, այլ փորթուգալացիներինը: Ամերիկական այդ վաճառականական ժողովրդին շատ էլ չէր գրաւում: Ամերիկայի հեռաւոր երկրները իրենց աղքատ ու կուլտուրապէս չըզարդացած ցեղերով, կարող էին միայն Սպանիայի ֆէօդալական ազնուականութեան համար գրաւիչ լինել, որ այնտեղ էլ ֆէօդալական մի նոր պետութիւն էր հաստատել: Սպանիայի կոլոնիաները ահագին նահանգների էին բաժանուած և նուիրուած էին թագակիրների արքանեակներին, որոնք մշակում էին իրանց հողերը կամ հնդիկ ճորտերի և կամ Աֆրիկէից բերուած սեամորթ գերիների միջոցով: Դա մի շահաւէտ բան չէր հոլանդացի վաճառականների համար: Աւելի շուտ արծաթի հանքերը կարող էին նրանց գրաւել, բայց այդ կողմից էլ նրանք աւելի գերազասում էին արծաթով բեռնաւորուած սպանական նաւատորմիղը կողոպտել, քան թէ Պերուի և Մեքսիկայի հանքերը մշակելով զբաղուել:

Բոլորովին տարբեր բան էին Փորթուգալիայի կոլոնիաները: Այստեղ կուլտուրապէս շատ բարձր զարգացողութեան հասած ազգեր էին բնակւում, որոնց մասամբ բաղմատեսակ արտադրութիւնների համար՝ Եւրոպայում շատ թանդ էին վճարում: Այդ վաճառանոցները գրաւելու և մոնոպոլիա դարձնելու ինդիրն էր, որ ամենից առաջ պիտի գրաւէր վաճառական ժողովրդին:

Այն ժամանակուանից, երբ Հոլանդացիները ծովի վրա յաղթեցին սպանացիներին, հնդկական ապրանքների Լիսաբոնից ամբողջ Եւրոպա տարածելու գործը ամբողջապէս նրանց ձեռքը անցաւ. բայց քիչ էր մնում, որ այդ շահաւէտ վաճառականութիւնը նրանց ձեռքից բոլորովին կորչէր, երբ Փորթուգալիան Սպանիայի իշխանութեան տակ անցաւ և Ֆիլիպ երկրորդը 1594 թ. իր հպատակներին արգիլեց՝ որևէ յարաբերութիւն ունենալ այդ խառնակիչների հետ:

Այդ էր պատճառը, որ Հոլանդացիները, չըկարողանալով այլ ևս Լիսաբոնից ապրանքներ ստանալ, սկսեցին դնալ այդ ապրանքների արտադրելու վայրերը, վռնդեցին փորթուգալացիներին, որտեղ որ հնարաւոր էր, և նրանց տեղ իրանց մոնոպոլիան հաստա-

տեղին Հնդկաստանում։ Փորթուգալիան արդէն շատ թոյլ ու աղքատ էր մարդերով, որ կարողանար լուրջ դիմադրութիւն ցոյց տալ։ Փորթուգալական փայլուն կոլոնիական պետութիւնը յանկարծ ընկաւ։

Հիւսիսային առևտրական հանրապետութեան սոցիալական ու քաղաքական ներքին կազմակերպութեան համաձայն, նրա կոլոնիական քաղաքականութիւնն էլ շատ տարբերւում էր Սպանիայում թագաւորող ֆէոդալական ինքնիշխան քաղաքականութիւնից։ Ոչ թէ բիւրօկրատիան, զօրքը և կամ եկեղեցին էին նորա կոլոնիաները կառավարողները ու շահագործողները, այլ վաճառականները։ Երբ ծովի վրայ ու ծովի միւս կողմում ընդհանուր զինուորական դրութիւն էր, երբ ազգերից ամեն մէկը աշխատում էր ոյժով դուրս վանել միւսին շահաւէտ վաճառականութեան ասպարէզից. երբ ամեն տեղ ծովային աւազակութիւնն էր թագաւորում, — առանձին վաճառականը պէտք եղած ոյժը չունէր, որ կարողանար միայնակ անդրովկեանեան վաճառականութիւն անել։ Այն ժամանակւայ կոլոնիական քաղաքականութիւնը նոյն վիճակի մէջ էր գտնւում, ինչպէս որ հիմա երկաթուղիները շինելու գործը։ Այս վերջինը այնպիսի մեծ միջոցներ է պահանջում. որ առանձին անհատի ոյժերից վեր են, ուստի կամ ինքը կառաւարութիւնն է ձեռնամուխ լինում նրանց, կամ թէ մեծ ակցիոներական ընկերութիւնների ձեռքն է ընկնում գործը, որոնք կառավարութիւնից մենաշնորհի լայն իրաւունքներ, իսկ շատ անգամ և դրամական օժանդակութիւն են ստանում։ Այդպէս էլ կոլոնիական քաղաքականութիւնն էր այն երկրներում, որտեղ կառավարչական իշխանութիւնը չէր զբաղւում նորանով. նա անցնում էր մեծ արտօնեալ առևտրական ընկերութիւնների ձեռքը։ Այդ կարգի երկրներում կոլոնիաները ծառայում են ոչ թէ պետութեան, եկեղեցու և ազնուականութեան իշխանութիւնը զօրեղացնելու, այլ կապիտալն ու բուրժուազիան զօրացնելու համար։ Հոլանդական վաճառականութիւնը սաստիկ ծաղկեց, իսկ դրա հետ մէկ տեղ ծաղկեց և արդիւնագործութիւնը։ Ճիշտ է հնդկական մանուածքէ ապրանքները մեծ յաջողութեամբ էին մրցում հոլանդական մանուֆակտուրայի հետ, բայց հոլանդացիների կոլոնիական վաճառականութեան գլխաւոր առարկաները քաղցրաւենիք էին, և միևնոյն վաճառականները, որոնք հնդկական ապրանքներ ու քաղցրաւենիք էին մատակարարում Ամստերդամից ամբողջ Եւրոպային, այդ ապրանքների հետ մէկ տեղ տարածում էին և հոլանդական արհեստաւորների ու գործաւորների

միայն հոլանդական ծագում ունեցող բանուորների ձեռքի աշխատանք չէին։ Բուրժուազիայի զօրանալով, հանրապետութեան մէջ զօրացան նաև թէ քաղաքացիական ազատութիւնը և թէ կրօնական համբերատարութիւնը, այնպէս որ ամենազարգացած գլուխները և ամենալաւ աշխատաւորները, որոնց անհանգստութեան համար աքսորել էր յաղթական ինքնիշխանութիւնը Սպանիայից, Փորթուգալիայից և Ֆրանսիայից, ապաստարան էին գտնում Հոլանդիայում և այն ժամանակ, երբ Սպանիայի ու Փորթուգալիայի բնակիչների թիւը, գնալով, նւազում էր, ահագին մարդկային հեղեղներ էին թափւում Հոլանդիա։

Բայց այդ փայլուն վիճակն էլ երկարատև չեղաւ։ Այդպիսի շահաւէտ վաճառականութեան մոնոպոլիան բազմաթիւ նախանձորդներ յարուցեց, որոնցից գլխաւորները այդ հանրապետութեան երկու ամենամեծ և ամենաուժեղ դրացիներն էին — Անգլիան և Ֆրանսիան, որոնցից մէկը նրան նեղում էր ծովի կողմից, իսկ միւսը ցամաքի կողմից։

Եթէ Հոլանդիան ցանկանում էր իր համաշխարհային քաղաքականութիւնը շարունակել, նա պէտք է թէ ցամաքի ու թէ ծովի վրայ իր ուժերից վեր գերակշռութիւն պահպանէր։ Նա հէնց դրան էլ ձգտում էր, բայց վերջ ի վերջոյ խորտակւեց, ինչպէս որ նրանից առաջ խորտակւել էին Սպանիան ու Փորթուգալիան։ Թէև կոլոնիական քաղաքականութեան շնորհով երկրի մէջ ահագին հարստութիւններ մտան, բայց այդ հարստութիւնները միայն մի քանի վաճառականական տոհմերին ու նրանց սիրելիներին բաժին եղան, այն ինչ ժողովրդի ընդհանուր մեծամասնութիւնը այն հարստութիւններն ու նրանց աղբիւրները պահպանելու համար մղւած անվերջ ծովային պատերազմների ամբողջ ծանրութիւնն էր կրում միայն։ Բացի դրանից՝ հարստութիւնը մի տեսակ թուլութիւն, բաղքերի ապականութիւն և հպարտութիւն մտցրեց վաճառական դասի ու նրանց արբանեակների մէջ։ Նրանք հետզհետէ աւելի ու աւելի անամօթաբար աշխատում էին պետական բոլոր ծանրութիւնները ստորին դասակարգի վրայ բարձել, կառավարութիւնը իրենց անհատական շահերին ծառայեցնել և աւելի ու աւելի ապացուցանում էին, որ իրանք բոլորովին զուրկ են պետական ոգէ իմաստ ունենալուց։ Արտաքին աւերումներին միացան և ներքին կռիւը, արդիւնագործութեան անկումը, որ անկարող էր դիմանալ պետական հետզհետէ

աճող տուրքերին, իսկ այդ բոլորի հետևանքն այն եղաւ, որ հասարակական ամբողջ կեանքը բոլորովին դանդաղաւ։ Որչափ Հոլանդիայի պատկերը փայլուն է XVII դարում, նոյնչափ էլ տխուր է նա ամբողջ XVIII դարի ընթացքում։

Հոլլանդացիների յաջողութիւնները, ի հարկէ, եւրոպական միւս ազգերին էլ դրդեցին նրանց օրինակին հետեւել. բոլորն էլ կոլոնիաներ գրաւելու մոդայով էին յափշտակւել։ Այս ուղղութեամբ արւած բոլոր փորձերի հետ ծանօթացնելը մեզ շատ հեռու կը տանէր, բայց նմուշի համար մենք այստեղ կը յիշենք այն, որ նոյնիսկ գերմանական իշխաններից մի քանիսն էլ վարակւել էին կոլոնիական ծրագրների հետևից ընկնելով, չնայելով որ նրանք դրա համար զուրկ էին միջոցներից։

Մեր դարի 40-ական թւականներին, երբ Գերմանիայում սկսել էին մեծ եռանդով երկաթուղիներ անցկացնել, ասում են, որ մի գերմանական փոքրիկ իշխան բացականչել է. «Ես էլ եմ ուզում երկաթուղի ունենալ, թէկուզ այդ բանը ինձ հազար տալեր արժենայ»։ Այդպէս էլ XVII դարում գերմանական իշխանները ցանկանում էին կոլոնիական պետութիւն հիմնել, թէկուզ դա հազար տալեր արժենար։ Համարեա թէ նոյն չափ էլ կարող էր արժենալ այն կոլոնիան, որ Բաւարեայի Կուրֆիւրստ Ֆերդինանդ-Մարիան էր ուզում հիմնել 1664 թ, և այն էլ ոչ թէ շաբաթան, այլ կարաիբեան ծովի ափերին —«վաթսուն մղոն երկայնութեամբ և նոյն չափ էլ լայնութեամբ» — բայց և որը չբայաջողւեց, հոլլանդ-արևելեան-հնդկական ընկերութեան դրած չափազանց ծանր պահանջների շնորհով։

Բայց դրա փոխարէն Բրանդէնբուրգի մեծ Կուրֆիւրստը իրաւունք ունի պարծենալու իր իսկական գերմանական կոլոնիա հիմնելու համար. նա մի արկածախնդիր հոլլանդացիով էր յափշտակւել, որ դեռ առաջուց կուրֆիւրստի համակրութիւնը գրաւել էր նրանով, որ սրա յանձնարարութեամբ ծովի վրայ շատ յաջողակ կերպով շնորհներ էր կողոպտել։

Բայց որովհետև Կենիգսբերգի վաճառականները չէին ցանկանում իրանց իշխանի առաջարկած ձեռնարկութեան մասնակցել, ինչ նրանց անիրագործելի բան էր երևում, ուստի պէտք եղաւ մի քանի գաղտնի խորհրդականներ ու գեներալներ նշանակել, որ Աֆրիկեան ընկերութեան հիմքը դնեն։ Այդ ընկերութիւնը Գուինէեան ափի վրայ ամրութիւն էլ հիմնեց և սկսեց թեթև սրտով Արևելեան Հնդկաստանի հետ վաճառականութիւն անել — ի հարկէ, «Աստծոյ օգնութեամբ» —Deo duce, ինչպէս որ կարելի էր կարդալ Կուրֆիւրստի այդ ընկերութեան համար կտրած դրամների վրայ։

Սակայն, չնայելով պարոն գաղտնի խորհրդականների ու գեներալների ոգևորութեանը, այդու ամենայնիւ, ինչպէս երևում է, նրանց պակասում էր գործնական խելք։ «Սև ապրանքը» բաւականաչափ օգուտ չէր բերում, իսկ ընկերութիւնը վնաս վնասի յետևից էր կրում, այնպէս որ Ֆրիդրիխ-Վիլհելմ I-ին ձանձրացրեց իր պապից ժառանգած խաղալիքի համար փող շպրտել։ 1721 թւականին, 4 տարի սակարկութիւն անելուց յետոյ հոլլանդացիներին ծախեց բրանդէնբուրգեան կոլոնիական երկիրները, ի մեծ ցաւ, ոչ թէ իր այն ժամանակւայ հպատակների, այլ մեր այժմեան կոլոնիաներով ոգևորւողների, որոնք դառն կերպով վայ են տալիս, թէ որչափ զօրաւոր ու փառաւոր պիտի լինէր հիմա Պրուսիան ու նրա հետ էլ ամբողջ Գերմանիան, եթէ գերիներով վաճառականութիւն անելը մեծացւէր և մի մեծ կոլոնիական պետութիւն հաստատւէր։

Բայց դրանք կարող են մխիթարւել նրանով, որ իրանցից աւելի զօրաւոր և անդրովկիանեան քաղաքականութեան համար աւելի յարմար դիրք ունեցող պետութիւնները աւելի ևս քիչ շահ ստացան իրանց կոլոնիական երկրներից։ Ֆրանսիան, որտեղ XVII դարում միապետութիւնը այնչափ զօրաւոր դիրք էր ստացել, թէ երկրի ներսում և թէ դրսում, իհարկէ, նոյն պէս յափշտակւել էր կոլոնիաներ հաստատելու մոդայով։

Ինչպէս Սպանիայում, այստեղ էլ պալատական ազնւականութեան ու եկեղեցու վրայ կրթնող ինքնիշխան միապետութիւնը իր ձեռքն առաւ կոլոնիական քաղաքականութիւնը։ Բայց Ֆրանսիայում այդ քաղաքականութիւնը աւելի ուշ սկսւեց, երբ կապիտալիզմի զարգացումը արդէն մի յայտնի աստիճանի էր հասել և, ի շահս երկրի զարգացման, իրանից այնպէս էլ հեշտութեամբ մեծ հարստութիւններ չէին ստացւում, որ միջոց տային բիւրօկրատիային, ազնւականութեանն ու եկեղեցուն մեծ գերակշռութիւն ստանալ ժողովրդի ընդհանուր մասսայի վերաբերեալ։ Ֆրանսիայի միապետութեան այժը նշանաւոր չափով երկրի վաճառականութեան ու արդիւնագործութեան բարգաւաճումից կախում ունէր, այնպէս որ միապետութիւնը չէր կարող այդ ֆակտորները այնպէս արհամարհել, ինչպէս որ անում էին Սպանիայի կառավարիչները։

Հէնց այդ հանգամանքի շնորհով էլ Ֆրանսիայի կոլոնիական բաղաքականութիւնը սպանական և հոլլանդական քաղաքականութիւնների մի տեսակ խառնուրդն էր ներկայացնում: Սպանական ընաւորութիւն էր կրում ամերիկական կոլոնիաների վերաբերեալ, իսկ հոլանդական — հնդկականների վերաբերեալ: Այս վերջինի վերաբերեալ, ամենից առաջ, խնդիրը նրա մէջ էր կայանում, որ ֆրանսիացիների ձեռքը գցեն, թէկուզ մասամբ, այն շահաւէտ վաճառականութիւնը, որ երազում էին մոնոպոլիա դարձնել նախ փորթուգալացիք, յետոյ հոլլանդացիք և վերջն էլ անգլիացիք: Այդ նպատակի համար առևտրական ընկերութիւններ էին հիմնւում, որոնց ամենաընդարձակ և բացառիկ իրաւունքներ էին տրւում:

Բայց, թէև ֆրանսիական միապետութեան տնտեսական ոյժը գլխաւորապէս վաճառականութեան և արդիւնագործութեան բարգաւաճումից էր կախւած և թէև Ֆրանսիայի պետերը, Հենրիխ IV-ից սկսած այդ ֆակտորների ծաղկեցնելը իրանց գլխաւոր խնամքներից մէկն էին համարում, այնուամենայնիւ կառավարչական զեկը ոչ թէ վաճառականների ու արդիւնագործների ձեռքին էր գտնւում, այլ բիւրօկրատների եւ պալատականների, իսկ կառավարչական սիստեմն էլ բռնակալութիւն էր, որ անողոք կերպով խեղտում էր հպատակների կողմից արտայայտւած ամեն մի ինքնուրոյն քայլ: Այդ էր պատճառը, որ Լիւդովիկոս ԺԴ -դն միևնոյն սխալը արեց, չնայելով որ նա մի առանձին սէր էր տածում դէպի վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը, ինչ որ Ֆիլիպ II-ն էր արել Սպանիայում: Այն ժամանակ, երբ նա մի կողմից վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը ծաղկեցնելու համար եռանդով կոլոնիական քաղաքականութիւն էր վարում, միւս կողմից նա քայքայում էր նրանց — շարունակ աճող զինւորական ծախսերով ու ժողովրդի ամենաարդիւնագործ մասին — հուգենոտներին — հալածելով, որոնց արտաքսեց Ֆրանսիայից, Նանտի էդիկտը ոչնչացնելով:

Նոյն կառավարչական սիստեմը ճնշում էր և առևտրական ընկերութիւններին: Ամեն մի ազատ ձեռնարկութիւն արգիլւած էր: Այսպէս, օրինակի համար, Արևելեան — Հնդկական ընկերութեան դիրեկտորները ոչ թէ ակցիոներների կողմից էին ընտրւում, այլ 1723 թւականից սկսած նշանակւում էին արքունիքի կողմից: Դրանք գործերը վարում էին իրանց քմահաճոյքի համաձայն: 1723 թ. սկսած մինչև այդ ընկերութեան գործերը դադարելը, — որով ընկերութեան

սնանկանալու առաջը առնւեցաւ (1769) — ակցիոներները միմիայն մէկ անգամ ժողով ունեցան (1744 թ.):

Զարմանալի չէ ուրեմն, որ այդ առևտրական ընկերութիւնը երբէք չկարողացաւ ծաղկեալ վիճակի հասնել: Եթէ Արևելեան Հնդկաստանում ֆրանսիացիները գլխաւորապէս հոլլանդացիների օրինակին էին հետևում, Ամերիկայումն էլ նրանք, թէև ոչ մեծ յաջողութեամբ, սպանացիների օրինակին էին հետևում: Ֆրանսիացիներին Միսիսիպիի հովտում — Լուիզանիա — հրապուրել էր այն, որ լսել էին, թէ իբր այնտեղ շատ հարուստ հանքեր կան: Լուիզանիայի ոսկու հանքերը մի լաւ թակարդ դառան նրանց համար: Դրա պատճառով միսիսիպեան ընկերութեան ակցիաների գները անասելի բարձրութեան հասան: Այդ դեռ բաւական չէր. արքունիքի սերելիները ահագին հողաբաժիններ նէլը ստացան և այդ նոր հողատէրերից ամեն մէկը աշխատում էր դէպի իր հողը գրաւել ֆրանսիացի, զուիցերիացի և գերմանացի բանւորներին իրենց հանքերը մշակելու համար: Բայց որովհետև այնտեղ իսկի հանքերի նշոյլներ էլ չկային, ուստի սապոնէ փամփուշտը շուտով պայթեց. միսիսիպեան ընկերութիւնը սնանկացաւ, իսկ թշւառ գաղթականները ստիպւած էին հողագործական աշխատանքով մի կերպ գլուխ պահել այդ սպանիչ կլիմայի տակ: Այդ էր պատճառը որ Ֆրանսիան 1762 թւականին այնպէս հեշտութեամբ այդ ողորմելի կոլոնիան Սպանիային զիջանեց:

Կանադայում գործը աւելի ևս լաւ էր դրւած: Առաջին գաղթականներին այնտեղ հրապուրողը ոսկու հանքերը չէին, այլ թանկագին մորթ ունեցող կենդանիները, գլխաւորապէս բոբրը: Մորթի վաճառականութիւնը մէկ ընկերութեան մենաշնորհ դարձաւ: Բայց դրա հետ մէկ տեղ փորձ եղաւ մի նոր ֆէոդալական պետութիւն էլ հիմնել այնտեղ, սպանացիների նման: Ինչպէս սպանական Ամերիկայում երկիրը մեծ Encominendas - ների էր բաժանւած, որոնցից ամեն մէկը իր առանձին հողատէրի (արքունիքի արբանեակները, վանքերը և այլն) էր պատկանում, այնպէս էլ Կանադան աղալղների բաժանեցին, որոնցից ամեն մէկը նիւրւում էր ովկիանոսի միւս կողմում բախտ որոնելու ցանկութիւն յայտնող զինւորականներին ու պաշտօնեաներին: Բայց բանը նրանումն էր, որ սպանական կոլոնիաներում խաղաղասէր հնդիկները ու խափշիկ գերիները երկրի մշակութեան համար մի շատ լաւ բանւորական ոյժ էին ներկայացնում, այն ինչ Կանադայի վայրենիները բոլորովին անպէտք էին այդպիսի

աշխատանքի համար։ Հողատէր ազատները պիտի աշխատէին Եւրոպայից գաղթականներ բերել, եթէ ոչ՝ նրանց անմշակ մնացած հողաբաժինները ոչ մի արժէք չէին կարող ունենալ։ Սակայն շատ քչերը կըգտնուէին ,որ ցանկանային ֆրանսիական ֆէոդալականութիւնից խուսափել նրա համար միայն, որ գնան Կանադայի ֆէոդալականութեան ճանկը ընկնեն ու այնտեղ էլ զօրացնեն հողատէրերի, եկեղեցու, — որի հարկը մոռացած չէր, — և գահի իշխանութիւնը։

Սպիտակամորթ ընակիչների թիւը շատ դանդաղ էր աճում, և այն ժամանակ — (1759 թ.) երբ անգլիացիները գրաւեցին Կանադան, նրանց թիւը ընդամենը 80,000 էր հասնում, իսկ դրանցից մեծ մասը զինուորներ և որսորդներ էին։

Այդ ժամանակներում էր, որ Ֆրանսիան իր Արևելեան Հընդկաստանի երկիրներն էլ կորցրեց։ Պարիզի դաշնագրութիւնից յետոյ (1763 թ.) նա հասարակ թէ այլ ևս ոչ մի կոլոնիա չունէր։

Ֆրանսիայի ներքին դրութիւնը — ֆէոդալական բռնապետութեան, տգէտ ու ագահ պալատականների, զինուորների, կղերի ու բիւրոկրատների ժողովրդին ճնշելն ու հարստահարելն էին միայն պատճառը, որ Ֆրանսիայի կոլոնիական քաղաքականութիւնը այդպէս ապարդիւն եղաւ ու այնքան զոհեր կլանեց։

Նաւատորմիղի մեր երկրպագուները անշուշտ պիտի առարկեն, թէ XVII և XVIII դարերի ֆրանսիական կոլոնիական քաղաքականութեան անյաջողութիւնը նրա համապատասխան ծովային ոյժ չունենալուն վերագրելու է։

Դա մասամբ միայն ճիշտ է։ Ծովային ոյժի պակասութիւնը ոչ մի կերպ չէ բացատրում, թէ ինչու կոլոնիաները չէին ծաղկում Ֆրանսիայի ձեռքում. նոյնպէս ամբողջապէս չէ պարզւում, թէ ինչու ֆրանսիացիները կորցրին նրանց։ Կլայվ և Վոլֆ անգլիացիները Հնդկաստանն ու Կանադան գրաւեցին ցամաքի վրայ յաղթութիւն տանելուց յետոյ միայն, իսկ Պարիզի դաշնագրութեամբ այդ կոլոնիաների կորուստը հաստատելու պատճառը ուելի Բոսրանի ցամաքային ճակատամարտի մէջ կրած ֆրանսիացիների պարտութիւնն էր, քան թէ Կիբերոնի մօտի ծովային պատերազմը։

Բայց մենք, իհարկէ, չենք հերքիլ, որ ԺԷ և ԺԸ դարերում ընդարձակ կոլոնիական քաղաքականութիւն վարելու համար անհրաժեշտ էր մեծ ծովային ոյժ ունենալ։ Այդ քաղաքականութիւնը մոնոպոլիայի վրայ էր հիմնուած. եւրոպական ազգերից ամեն մէկը

աշխատում էր ադնրովկեանեան երկրներից մէկն ու մէկը գրաւել ու ինքը շահագործել, թոյլ չտալով որ մի ուրիշն էլ մաս ունենայ իր աւարից։ Դրա համար էլ, իհարկէ, անհրաժեշտ էր մի յայտնի ծովային զօրութիւն ունենալ և այդ զօրութիւնը այնքան պիտի լինէր, որքան որ հարուստ էր աւարը և որքան որ աւելի գրաւիչ էր միւս ծովային ուժեղ պետութիւնների համար։

Այդ բանը ֆրանսիական ԺԷ և ԺԸ դարերի կառավարիչներին պակաս յայտնի չէր, քան մեր այժմեան նաւատորմիղի երկրպագուներին։ Իսկ թէ ԺԷ դարի կառավարչական մեծ մարդիկը — Հենրիխ Դ , Ռիշելիէ, Մազարինի — մինչև Լիւդովիկոս ԺԴ չէին փորձում մեծ նաւատորմիղ հաստատել, դրա պատճառը այն էր, որ Սպանիայի օրինակը նրանց սաստիկ վախեցրել էր. ճիշտ այդ ժամանակներում Սպանիան ուժասպառ էր լինում, ցամաքի թէ ծովի վրայ միաժամանակ մեծ զօրութիւն պահպանելու պատճառով։ Միւս կողմից՝ հոլանդացիները, իսկ յետոյ և անգլիացիներն արդէն չափազանց ուժեղ էին, որ կարելի լինէր յուսալ թէ կարող են նրանց հաւասարուել։ Ոչ թէ նաւատորմիղի կամ կոլոնիաների, այլ ցամաքային զօրքի ու երկրի արդիւնագործութեան վրայ էր դարձած այն ժամանակւայ ֆրանսիական կառավարութեան ամբողջ հոգսը։

Իրերի այս դրութիւնը փոխուեց, երբ Լիւդովիկոս ԺԴ «Թագաւոր-արեգակը» որոշեց ինքը լինել իր կանցլերը։ Նա շրջականացաւ ցամաքի վրայ գերիշխանութիւնով ու իր հայրենիքի արդիւնագործութեան բարգաւաճումով։ Նա ուզեց և մեծ կոլոնիաներ ու զօրաւոր նաւատորմիղ ունենալ։ «1664 և 1665 թուականներին, — ասում է Վոլտերը իր «Լիւդովիկոս ԺԴ-ի դարը» աշխատութեան մէջ, — երբ անգլիացիները ու հոլանդացիները 300 մեծ նաւեր ունէին ու թագաւորում էին ովկիանոսի վրայ, Լիւդովիկոսը 15թէ 16 փոքր նաւեր ունէր միայն։ Այդուամենայնիւ նա չվարանեց ամբողջ ոյժերը լարել, որ կարելի եղածին չափ շուտով և վճռական կերպով վերջ դրի այդ խայտառակ դրութեանը։

Ինչ որ կարելի էր դրամի ուժով անել, արած էր։ Բազմաթիւ մեծ և կարգ ու սարքին նաւեր շինեցին։ Բայց բանը նրանումն է, որ նաւերը ինքն ըստ ինքեան դեռ ծովային ոյժ չէին կազմում. անհրաժեշտ էր նրանց համար նաւաստիներ էլ ստեղծել։ Իսկ այդ այնքան էլ հասարակ բան չէ։ Ամեն մի գիւղացի երիտասարդ, ամեն մի թափառաշրջիկ կարող էր զինուոր դառնալ, բաւական է միայն,

որ լաւ կազմուածք ունենայ, իսկ նաւատի լինելու համար անհրաժեշտ է փորձուած նաւագնաց լինել։ Առևտրական նաւատորմիղը, որ նոր էր սկսել զարգանալ, ստիպուած էր իր ամենալաւ մարդիկը զինուորական նաւատորմիղին զոհել։

Բայց դրանով էլ դեռ ամեն բան չէր վերջանում։ Հարկաւոր էր և օֆիցերներ ունենալ։ Ծովային զինուորական գործը ցամաքայինից դեռ շատ առաջ մի ամբողջ գիտութիւն էր դառել. իսկ հրամանատարը ծովային զինուորականութեան մէջ աւելի ևս մեծ նշանակութիւն ունէր։ Ցամաքի վրայ, զինուորը իր եռանդով, դիմացկանութեամբ և կշռադատութիւնով կարող է շատ անգամ օֆիցերի սխալն ուղղել, այն ինչ ծովի վրայ նաւերի շարժուածքներն են, որ վճռական նշանակութիւն ունին, իսկ դա ամբողջապէս հրամանատարից է կախուած։

Իսկ ով պէտք է օֆիցեր լինէր ֆէօդալական ինքնիշխանութեան օրերում։ Բարձրագոյն պաշտօններ թէ զօրքի մէջ և թէ կառավարչական հիմնարկութիւններում բոլորն էլ ազնուականներին էին արտօնուած։ Ոչ թէ փորձառու նաւագնացներն, այլ ազէտ ու փափկասէր պալատականներն էին նաւատորմիղի գլուխ անցնում։ Շատ զարմանալի կլինէր, եթէ Ֆրանսիան կարողանար այնպիսի առաւելութիւնների հասնել, որոնց Անգլիան էր հասել. ախր չէ որ ամեն անգամ երբ Ֆրանսիացիները զօրացնում էին իրանց զինուորական ոյժերը, անգլիացիներն էլ իրենցն էին զօրացնում։ Բայց վատ հրամանատարութիւնը Ֆրանսիական ծովային զօրութեան վիճակը աւելի ևս աննպաստ էր դարձնում անգլիացիների համեմատութեամբ։ Բոլոր ջանքերը ի զուր անցան. երկիրը աղքատանում էր առանց վաճառականութեան մի օգուտ տալու։ Ընդհակառակը, ծովային պատերազմները վերջնականապէս քայքայեցին նրան։ ԺԸ դարի ընթացքում Ֆրանսիական նաւատորմիղը մի յայտնի բարձրութեան հասցնելու բոլոր փորձերը միշտ անյաջողութեամբ էին վերջանում, հէնց որ գործը պատերազմի էր հասնում։

Եթէ Ֆրանսիական կոլոնիական քաղաքականութիւնը վնասւում էր ծովային պատերազմի համար ընդունակ ոյժեր չունենալու պատճառով, այդ ոչ թէ նրանից էր, որ Ֆրանսիական կառավարչական մարդիկը չէին հասկանում այդ ոյժերի նշանակութիւնը, այլ ուղղակի նրանից, որ այն ժամանակ դրանց ստեղծելու համար անհրաժեշտ պայմաններ չկային։ Այդ համաշխարհային քաղաքականութիւնը այն

Այդ համաշխարհային քաղաքականութիւնը այն հետևանքն ունեցաւ միայն, որ իզուր ահագին փողեր ծախսուեցին ու այնքան մարդկային կեանքեր զոհուեցին, որոնց շնորհով երկիրն էլ ԺԸ դարում տնտեսականապէս բոլորովին ընկաւ։

Ինչ որ չէին կարողացել անել Սպանիան ու Հոլանդիան, նոյնը անմատչելի էր և զօրաւոր Ֆրանսիային, այն է՝ միաժամանակ գերիշխանութիւն պահպանել թէ ցամաքի և թէ ծովի վրայ։ Այդ բանը մինչև օրս էլ և ոչ մի պետութեան չէ յաջողուել։

Փորթուգալիայի, Սպանիայի և Հոլանդիայի կոլոնիական քաղաքականութիւնը, գոնէ կարճատև փայլից յետոյ, նրանց կատարեալ անկումի հասցրեց։ Իսկ Ֆրանսիայինը փայլուն չէր էլ չունեցաւ, սկզբից մինչև վերջ այդ քաղաքականութիւնը մի անընդհատ անյաջողութիւնների շղթայ է կազմում, որ տեղ տեղ կտրւում է կարճատև յաղթութիւններով։

ՀԻՇՏ

Ճիշտ դրա հակառակն է ներկայացնում Անգլիայի քաղաքականութիւնը։ Երբ որ ասում են թէ կոլոնիաներ գրաւելով երկիրը նիւթական օգուտներ է ստանում ու տնտեսականապէս զարգանում է, — միշտ Անգլիային են նկատի ունենում. այդ երկիրը յիրաւի որ գլխաւորապէս կոլոնիաներին է պարտական իր հարստութիւններով ու իր տնտեսական զարգացման բարձր աստիճանով, որ նա միւս ազգերից շատ աւելի առաջ է ձեռք բերել։ Ուղղակի հանգամանքների մի բախտաւոր դասաւորութեան շնորհիւ է, որ Անգլիայի համար մի բացառիկ դիրք է ստեղծել և չափազանց մեծ յիմարութիւն կլինի ուրիշ ազգերի կողմից՝ ձգտել միևնոյն դիրքը ձեռք բերել, ԺԷ և ԺԸ դարերի բրիտանական կոլոնիական քաղաքականութեան արտաքին կողմերը ընդօրինակելով միայն։

Հոլանդիայի նման Անգլիայի բախտն էլ նրանով բանեց, որ նրա կոլոնիական քաղաքականութիւնը էլ ոկսւեց ճիշտ այն ժամանակ, երբ ֆէօդալական ինքնիշխանութեան դէմ մղած կռիւը վերջացաւ յաղթանակով։ Այդ քաղաքականութիւնն նեցուկ չդառաւ ինքնիշխանութեանը, որի միջոցով կարողանային քաղաքացիների և ստորին դասակարգերի ինքնուրոյն գործունէութիւնը ճնշել։ Միւս կողմից՝ ֆէօդալական պալատական ազնուականութիւնը, եկեղեցին ու բիւրօկրատիան անկարող էին իրանց միջամտութեամբ վնասել այդ քաղաքականութեանը։ Այդպիսով կոլոնիական քաղաքականութիւնը այստեղ էլ կարող է նոյնպէս զօրաւոր ու բարերար ազդեցութիւն

ունենալ տնտեսական զարգացման, կապիտալի և արդիւնագործութեան բարգաւաճման վրայ, ինչպէս եղել էր Հոլանդիայում, և նոյն իսկ դրանից էլ աւելի, քանի որ մեծ Բրիտանիան և Իրլանդիան աւելի մեծ ուժ էին ներկայացնում, քան Հոլանդիան, ուստի Անգլիայի ժողովուրդը աւելի հեշտութեամբ կարող էր տանել կոլոնիական քաղաքականութեան համար արուած ծախսերը, առանց տնտեսական այն վնասը կրելու, որ Հոլանդիային քայքայման հասցրեց: Հոլանդիայի համեմատութեամբ Անգլիան և այն առաւելութիւնը ունէր. որ կղզիացած երկիր է: Մինչ Հոլանդիան իր դիրքն ու հարստութիւնը պահպանելու համար ստիպւած էր միաժամանակ զօրաւոր լինել թէ ծովի և թէ ցամաքի վրայ և դրա համար այնպիսի ոյժ թափել, որ վերջ ի վերջոյ սպառեցին նրան: Անգլիան կարող էր իր բոլոր ոյժերը կենտրոնացնել միայն իր ծովային զօրութիւնը զարգացնելու վրայ: Նա կարող էր բոլորովին իրան զերծ պահել մեծ կանոնաւոր զօրք պահելուց և եւրոպական խնդիրների մէջ միջամտել այն ժամանակ միայն, երբ այդ իր շահն էր պահանջում:

Դրան աւելացաւ և այն հանգամանքը, որ քանի եւրոպական վաճառականութեան կենտրոնը աւելի ու աւելի հիւսիս էր տեղափոխւում, քանի աւելի էին ընկնում Իտալիան, Սպանիան ու Փորտուգալիան, և քանի բարձրանում էին Հոլանդիան ու հիւսիսային Ֆրանսիան, այնչափ էլ նպաստաւոր էր դառնում Անգլիայի դիրքը վաճառականութեան մէջ գերիշխանութիւն ունենալու համար: Նա միանգամայն թագաւորում էր այն ճանապարհների վրայ, որոնք տանում էին դէպի այս վերջին երկու երկրների նաւահանգիստները:

Նախ քան Անգլիան կարող էր կոլոնիական քաղաքականութեան կամ նոյնիսկ ծովային ուժեղ պետութիւններից մէկն ու մէկի հետ մրցելու մասին մտածելու, նրա յանդուգն ծովագնացները, իրանց նպաստաւոր դիրքից օգտւելով ջրանցքի վրայ, — որտեղից անցնում էր եւրոպական առևտրական նաւերի մեծ մասը, — սկսեցին ծովային աւազակութեամբ և մաքսանենգութեամբ պարապել: Աւազակութիւնն ու մաքսանենգութիւնը, որոնց վրայ բրիտանական կառավարութիւնը մեծ համբերութեամբ էր նայում, ծաղկում էին նաև կոլոնիաների եզերքներում, նամանաւանդ սպանիական կոլոնիաների:

Այս աւելի շահաւէտ քան ազնիւ արհեստի մէջ են կրթւել անգլիացի առաջին ծովային հերոսները:

Այս բոլորը նպաստում էին նրա ծովային զօրութեան զարգացմանը, որը ԺԸ հարիւրամեակի կէսի մօտերքին, ֆէոդալական ինքիշխանութեան խորտակումից յետոյ, արդէն կարողանում էր հոլանդացիների զօրութեան դէմ մրցել, իսկ շուտով նրանից էլ գերազանցեց և, վերջապէս, բացառիկ գերիշխանութեան հասաւ ծովի վրայ:

Անգլիան ոչ միայն կարողացաւ կոլոնիաներ գրաւել իր ծովային գերազանցութեան շնորհով, այլ կարողացաւ և կառավարել նրանց:

Նրա քաղաքականութիւնը Արևելեան Հնդկաստանում հոլանդականին էր նմանում: Մի արտօնեալ ընկերութիւն (սկզբում երկու էին) Հնդկաստանի հետ վաճառականութիւն անելու և երկիրը արդիւնաշահելու մենաշնորհ ստացաւ: Ֆրանսիացիների հետ մրցելու պատճառով, այդ առևտրական ընկերութիւնը մէկ անգամ, մի լաւ հաստատւելուց յետոյ, այլ ևս սկսեց զարգանալ և շուտով հոլանդական ընկերութեանն էլ գերազանցեց:

Հոլանդական վաճառականների հոգսը գլխաւորապէս առևտուրն էր, այդ պատճառով էլ նրանք ծովափեայ առևտրական կենդրոններ ու կղզիներ իրանց ձեռքը գցելով էին միայն բաւականանում: Դրա հակառակ, կոլոնիաներ հաստատող ֆէոդալականութիւնը իր գլխաւոր ոյժը մեծ հողային երկրներ գրաւելու մէջ էր տեսնում: Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս այդ ձգտումը արտայայտւեց, երբ Սպանիայի ու Ֆրանսիայի նման ֆէոդալական երկրները Ամերիկայում կոլոնիաներ հաստատեցին: Արևելեան Հնդկաստանում ֆրանսիացիները սկզբում հոլանդացիների օրինակին էին հետևում, իսկ ԺԸ դարի միջերքին, Ֆրանս-արևելեան հնդկական ընկերութեան պատկանող երկրների գլխաւոր կառավարիչ Դիւպլէն մի արշաւանք գործեց դէպի երկրի ներսը, նրան յաջողւեց հարաւային Հնդկաստանում մի մեծ պետութիւն հիմնել, 30,000,000 բնակիչներով, բայց չկարողացաւ այդ պետութիւնը պահպանել: Վերսալի պալատականները ու բիւրոկրատները, որոնք այդ ընկերութեան կառավարիչներն էին, ոչ մի գաղափար չունէին Դիւպլէի ձեռնարկութեան մասին. նրանք այդ մեծ պետութիւնը ճակատագրի կամքին թողեցին: Անգլիական վաճառականները աւելի լաւ հասկացան թէ բանը ինչումն է և սկսեցին եռանդով դիմադրութիւն ցոյց տալ ֆրանսիացիներին: Սրանք մի քանի անգամ պարտութիւն կրեցին. բայց նախքան վճռական բոպէն հասնելը, ֆրանս-արևելեան-հնդկական ընկերութիւնը հրաժարւեց իր կոլոնիայից և զիջեց իր անգլիական մրցակցին,

Այս վերջինը շարունակեց Դիսպլէի գործը, գրաւեց հարաւային Հնդկաստանը, յետոյ Բենգալիան և այդպիսով հիմք դրեց այն անգլո-հնդկական տիրապետութեանը. որ իր, տեղ տեղ բարձր կուլտուրայի հասած, բնակիչների թւով հաւասարւում է ամբողջ Եւրոպային (չըհաշւելով Ռուսաստանը), և որ այն ժամանակւանից մինչև այսօր անգլիական բուրժուազիայի եկամուտների ամենահարուստ աղբիւրն է կազմում: Անգլիական բուրժուազիան երկար ժամանակ զգուշանում էր այդ իշխանութիւնը ձեռք բերելու ու հարստանալու ամենալաւ զէնքը իրանց կառավարութեան զիջանել և նրանք, վերջապէս որոշեցին այդ զիջումը անել մեր դարի կիսում միայն, երբ կառավարչական դեկը ամբողջապէս բուրժուազիայի ձեռքն անցաւ:

Նրա ամերիկական կոլոնիաների տւած հետեւանքները աւելի ևս խրատական էին թէ իր — Անգլիայի — և թէ ամբողջ մարդկութեան զարգացման համար:

Անգլիայի ֆէօդալական միապետութիւնը, — որ ձգտում էր ԺԸ դարի առաջին կիսում ամուր կերպով հաստատւել այդ երկրում, — պատճառ դառաւ մի ահագին գաղթական հոսանքի, ինչպէս եղել էր Սպանիայում ու Ֆրանսիայում: Գաղթողները ռամիկ դասակարգն էր՝ գլխաւորապէս մանր բուրժուազիան ու մանր հողատէրերը: Սակայն, մինչ սպանական ու ֆրանսիական գաղթականները, իրանց հայրենիքից հեռանալով, խզում էին նրանցից իրանց բոլոր կապերը և, մի որևէ Եւրոպական երկիր տեղափոխւելով, դրան էին նւիրում իրանց ճարտարութիւնն ու բոլոր ոյժերը, — բրիտանական գաղթականները միշտ հաւատարիմ էին մնում Անգլիային: Սկզբում նրանք էլ, ուրիշ շատերի նման գնում էին Հոլանդիա, որ այն ժամանակ միակ երկիրն էր, որտեղ կրօնի համբերատարութիւն և քաղաքացիական ազատութիւն կար. բայց հէնց որ մի քանի յանդուգն պիւներների յաջողւեց իրանց համար մի նոր և բոլորովին ազատ հայրենիք գտնել Անգլիայից ամենամօտ ամերիկեան ափերի վրայ ու խուլ անտառների մէջ, շուտով նրանց յետևից բազմաթիւ գնացողներ եղան: Ճիշտ է, նրանք դարձեալ անգլիական հողի վրայ էին տեղափոխւում և, եթէ Անգլիայում միապետութիւնը յաղթող հանդիսանար Նոր Անգլիայում էլ կրօնի ու քաղաքացիական ազատութեան վերջ պիտի դրւէր: Այդ պարագայում նոր անգլիական նահանգները նոյնպէս դանդաղ ու դժւարութեամբ պիտի զարգանային- ինչպէս հարևան Կանադան էր զարգանում, որտեղ ճիզւիտներն ու զինւորներն էին թագաւորում

Բայց Ստիւարտները տապալւեցին. հանրապետութիւն հաստատւեց, իսկ երբ հանրապետութիւնն էլ ընկաւ, կարճատև բէակցիայից յետոյ, 1868 թւականի «փառաւոր յեղափոխութեամբ» այսպիսի մի փոխադարձ զիջողութիւն հաստատւեց. գրամական ու հողային արիստոկրատիան իրարու մէջ բաժանեցին պետական իշխանութիւնը, իսկ ժողովրդային մասսան թէև հեռացւեց կառավարչական գործերում մասնակցութիւն ունենալուց, բայց նրան գործունէութեան ուրիշ բաւական մեծ իրաւունքներ տրւեցին:

Այսպիսով ամերիկական կոլոնիաների ազատութիւնը ապահովւած էր և, եթէ առաջ միայն հալածւածներն էին մեծ թւով փախչում այնտեղ խուլ անկիւններում պաշտպանութիւն փնտռելու, այժմ մայրենի երկրում կապիտալիզմի թագաւորութիւնը հաստատւելուց յետոյ, աւելի ևս մեծ բանակութեամբ չքաւորներ սկսեցին գնալ Ամերիկա, բարեկեցութիւն գտնելու և հողային բաժիններ ստանալու յոյսերով շլացած: Մինչդեռ շատ աւելի առաջուց կոլոնիա հաստատւած Կանադայում, ինչպէս տեսանք, ընդամենը 80,000 եւրոպական ծագում ունեցող բնակիչներն էին հաշւում ԺԸ դարի մէջերքում, բրիտանական այն կոլոնիաներում, որ յետոյ Միցիալ Նահանգները կազմեցին, ոմանց հաշւելով 1,200,000 եւրոպացի բնակիչներ կային, իսկ 1755 թ. այդ թիւը համարեա թէ կրկնապատկւել էր. իսկ դա արդէն Շոտլանդիայի և Նոյնիսկ Իրլանդիայի բնակիչների թւից էլ աւելի էր:

Նորագոյն կոլոնիական քաղաքականութեան պատմութեան մէջ մենք առաջին անգամ ենք տեսնում, որ այնպիսի մի մեծ կոլոնիական պետութիւն է հաստատւում, որը ոչ թէ շահագործութեան, այլ աշխատանքի վրայ է հիմնւած, որը իր մետրոպոլիայի բնակիչների թիւը բազմացնում, այլ ոչ թէ նւազեցնում է, և որը ովկիանոսի միւս կողմում մի այնպիսի հասարակութիւն է ներկայացնում իրանից, որ միանգամայն արժանի և նոյն իսկ աւելի բարձր է քան իրան ծնունդ տւող հասարակութիւնը, որովհետև նա արդէն ազատւած է հնացած աւանդութիւնների կապանքներից. որը, վերջապէս, իր նոր հայրենիքում Եւրոպական կուլտուրան զարգացնելու ահագին ձգտումներ է ցոյց տալիս:

Բայց եթէ Անգլիան Ամերիկայում ունեցած իր համեմատաբար փոքր կոլոնիաների օգնութեամբ կարողացաւ այնպիսի զօրաւոր դիրքի հասնել, որ շատ ու շատ գերազանց էր ֆրանսիայի անսահման

հողերի տիրապետութեամբ ստեղծած դիրքից, հէնց այդ միևնոյն բրիտանական պետութեան այն աղբիւրից էլ պիտի առաջ գար սոսկալի պարտութիւնը, որ նա երբէք չէր կրել։

Որչափ էլ Անգլիայի կոլոնիական քաղաքականութիւնը իր ներքին կազմութեան ու դրութեան շնորհով գերազանցէր միւս ազգերի, նոյն իսկ հոլլանդացիների քաղաքականութեանը, այնուամենայնիւ նա էլ միւսների նման շահագործութեան ու մոնոպոլիայի բնաւորութիւն էր կրում։ Կոլոնիաներում մայր երկրի հետ մրցակիցներ ստեղծելու համար չէ՞ր, որ նրանց պաշտպանութեան համար այնքան մեծ ծախսեր էին անում։ Ամերիկական կոլոնիաներն էլ արևելեան - հնդկական կոլոնիաների նման պէտք է անգլիական պետութեանը ու նրա տիրապետող դասակարգերին հարստանալու միջոց ծառայէին։ Թէև Անգլիան մի առանձին պետութիւն չէր հիմնել, որ ամերիկական կոլոնիաների հետ առևտուր անելու մոնոպոլիա ունենար, այնու ամենայնիւ նա արգիլել էր՝ անգլիական նաւերից զատ, ուրիշ նաւերով, վաճառականութիւն անելը, ոչ անգլիական նաւահանգիստներից ապրանքներ բերելը և մի քանի տեսակ ապրանքների ոչ անգլիական նաւահանգիստներում վաճառելը։ Ամերիկացիներին նոյնպէս արգիլուած էր բարձր տեսակի արդիւնագործութեան ոևէ ճիւղով պարապելը և մի միայն ամենագռեհիկ արհեստները էին նրանց թոյլատրուում։ Վերջապէս անգլիական կառավարութիւնը աշխատում էր հարկերով ծանրաբեռնել ամերիկական կոլոնիաները, որպէսզի միջոց չունենայ պահպանելու այն բազմաթիւ աստիճանաւորներին ու զինուորներին, որոնց ուղարկում էր այնտեղ, կոլոնիաները հպատակութեան մէջ պահելու համար։

Մինչ ամերիկական կոլոնիաների ազատութեանը սպառնում էր վտանգաւոր թշնամին — Ֆրանսիական միապետութեան ինքնիշխանութիւնը, այդ կոլոնիաների բնակիչները լցուած էին հայրենասիրութեամբ և ամենայն եռանդով ու յաջողութեամբ օգնում էին իրանց հայրենիքին՝ կռուել Ֆրանսիացիների դէմ։ Բայց անգլիացիների յաղթութեամբ վերջացած այդ կռիւը ոչ միայն մի լաւ վարժարան դառաւ ամերիկական միլիցիայի համար — Վաշինգտոնը այդ ժամանակ քաղեց իւր առաջին դափնիները — այլ հէնց իր յաջողակ վարչանի շնորհով այն հետևանքը ունեցաւ, որ բրիտանական պարլամենտը Ամերիկայի անվախութեան ամենամօտ և ամենավտանգաւոր թշնամին դառաւ։ Այսպիսով ահա, դեռ երեկուան իրանց զինակից եղբայրը,

իսկ այսօր թշնամի անգլիացիների հետ կռիւը անխուսափելի էր, և ամերիկացիներն այդ կռիւը մղեցին հէնց նոյն ֆրանսիացիների օգնութեամբ, որոնց մի քանի տարի առաջ դուրս էին արել Ամերիկայից։

1763 թ. Պարիզի դաշնագրութիւնը հաստատեց Կանադայի կորուստը ֆրանսիացիների համար։ Տասը տարի յետոյ, ամերիկական կոլոնիաները ամբողջ ոյժով ապստամբած էին Անգլիայի դէմ. 1778 թ. նրանք միացան Ֆրանսիայի հետ և, Պարիզի դաշնագրութիւնից 20 տարի յետոյ, Վեստֆալեան դաշնագրութիւնը հաստատեց ամերիկական կոլոնիաների կորուստը Անգլիայի համար ու նրանց անկախութիւնը։

Ամերիկական կոլոնիաների անկախութեան համար մղած կռիւը ֆրանսիական մեծ յեղափոխութեան յառաջաբանն էր։ Հասարակական նոր խաւեր էին առաջ եկել ու իշխանութիւն ձեռք բերել տնտեսական նոր պահանջներ էին ծագել, իսկ դրա հետ մէկ տեղ մինչև այդ ժամանակ եղած կոլոնիական քաղաքականութիւնը շարունակել այլևս անհնարին էր դառել, որովհետև այդ քաղաքականութիւնը բոլոր երկրներում սնանկութիւն էր կրել, իսկ Անգլիային այդպիսի ծանր պարտութեան հասցրեց։

Բայց ֆրանսիական յեղափոխութեան և դրանից յետոյ ծագած համաշխարհային ամենամօտիկ հետևանքը այն եղաւ, որ բրիտանական կոլոնիական քաղաքականութիւնը անասելի կերպով ընդլայնացաւ։ Մինչ եւրոպական ազգերը ցամաքի վրայ արիւնահեղ պատերազմների մէջ իրար ջլատում էին, Անգլիան իր ծովային ոյժերով խորտակում էր նրանց անդրովկիանեան վաճառականութիւնը ու գրաւում էր նրանց կոլոնիաները, որոնցից մէկ մասը միայն յետոյ վերադարձրեց նրանց։

Այժմ այդ ժամանակների յիշողութիւններով օգտուում են, որպէսզի կարողանան ծովային ծրագրի օգտին նպաստաւոր տրամադրութիւն ստեղծել։ Պատերազմական նախարար պ. ֆոն-Գոսլերը ըէյխստագի փետրուար 21 նիստում մատնանիշ արեց այն հանգամանքի վրայ, որ Նապոլէոնը պարտութիւն կրեց գլխաւորապէս նաւատորմիղի պակասութեան պատճառով։ Սպանիայի հետ պատերազմելու ժամանակ նա չկարողացաւ ծովեզերքը պաշարել և անգլիացիները անարգել կերպով մթերքներ ու մարդիկ էին ներմուծում այնտեղ։ Նա հեշտութեամբ կը յաղթէր Սպանիային, եթէ նաւատորմիղ ու-

նենար։ Նոյնպէս Ռուսաստանի հետ պատերազմելու ժամանակ, եթէ նաւատորմիղ ունենար, Նապոլէօնը բոլորովին ուրիշ ծրագրով կը-շարժուէր։

Ենթադրենք, թէ այդ ճիշտ է։ Բայց դա ի՞նչ է ապացուցանում։ Միթէ Նապոլէօնը նաւատորմիղի նշանակութիւնը չէր հասկանում։ Միթէ նա չգիտէր թէ որքան անհրաժեշտ է նաւատորմիղը իր ծրագրները իրականացնելու համար։ Իհարկէ, հասկանում էր։ Քանի քանի անգամներ նա եռանդուն փորձեր արեց մեծ նաւատորմիղ ստեղծելու, բայց իր ծրագրները իրականացնելու համար ոչ թէ նրան ընդհանրապէս ծովային զօրութիւն էր պակասում, այլ անհրաժեշտ էր այնպիսի զօրութիւն ունենալ, որ կարողանար անգլիականին գերազանցել։ Իսկ այդպիսի մի զօրութիւն ստեղծելը նրան ոչ մի կերպ չընայողուեց, չընայելով որ նա իր ամբողջ ոյժերով աշխատում էր այդ մասին։

Սակայն, այդ էլ դեռ բաւական չէ՝ ասելու համար թէ Նապոլէօնը պարտութիւն կրեց նաւատորմիղի պակասութեան շնորհով։ Ո՞վ էր նրան ստիպում համաշխարհային քաղաքականութիւն վարել, որը կարող էր յաջողութիւն ունենալ այն պարագայում միայն, եթէ անգլիականից գերազանցող նաւատորմիղ ունենար։ Նապոլէօնը այն պատճառով պարտութիւն կրեց, որ շատ անհոգութեամբ էր վերաբերւում իր ծրագրներին և չափազանց մեծ վստահութիւն ունէր իր հպատակ ազգերի համբերատարութեան վրայ։ Դրանով նա իր անկումը փորեց, իսկ ազգերին տասնեակ տարիների ընթացքում ծանր վնասներ հասցրեց։

Գ. ֆոն-Գոսլերը իրաւացի է, Նապոլէօն Ա մեզ իբրև նախազգուշացնող մի օրինակ յիշեցնելով, սակայն այդ օրինակը նրա օգտին չէ խօսում։ Պատմական դէպքերը Ֆիլիպ Բ-ից սկսած մինչև Նապոլէօն Ա ամենապարզ ապացոյցներ են, որ ծովի ու ցամաքի վրա, միաժամանակ գերագոյն զօրութեան ձգտելը յաջողութիւն չէ ունեցել, նոյնիսկ Եւրոպայի ամենամեծ և ամենազօրեղ ազգերի համար էլ, այլ դա նրանց միմիայն քայքայել ու տնտեսական անկումի է հասցրել։

ՄԱՆՉԵՍՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ* ԿՈԼՈՆԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

II

Ամերիկական կոլոնիաների անջատումը սկիզբ դրեց — գոնէ բանուորական** կոլոնիաների վերաբերեալ — Անգլիայի Նոր քաղաքականութեան, որի շնորհով Նրա կոլոնիաները վերջապէս կատարեալ ինքնավարութիւն ստացան։

Բայց ամերիկական անկախութեան համար մղուած պատերազմի տուած դասից աւելի արդիւնաբերական կապիտալի զարգացումը աղդեց Անգլիայի և ամբողջ Եւրոպայ կոլոնիական քաղաքականութեանվրայ։

Հազարաւոր տարիներ է, ինչ գոյութիւն ունին չունևոր պրոլետարները, դրամատէրերն էլ — վաճառականներն ու վաշխառուները — հազարաւոր տարիներ է, ինչ գոյութիւն ունին, բայց նրանք հարստութիւն արտադրողներ չէին, այլ միայն իրանց ձեռքն էին հաւաքում արտադրած հարստութիւնները։ Նրանք պէտք չունէին արտադրութեան նոր եղանակներ հնարելու, հետևապէս և հասարակական կազմակերպութեան նոր ձևեր ստեղծելու։ Վաճառականներն ու վաշխառուները մինչև օրս ամեն տեսակ հասարակական կազմակերպութեան հետ հաշտ են ապրել և մինչև իսկ շատ անգամ պահպանողական տարր են կազմել (նամանաւանդ վաշխառուները)։ Կապիտալի արդիւնագործութեան տիրանալուց ու նրա ազդեցութեան շնորհով միայն արտադրութեան այնպիսի նոր եղանակ առաջ եկաւ, որ հասարակական կազմակերպութեան նոր ձևեր էր պահանջում և որը, ոչ թէ միայն բոլոր յետամնաց տեխնիկական ու հասարակական պայ-

*) Մանչեստրականութիւն — բաղարեցիական մեջ կոչւում է այն ուղղութիւնը, որ առեւտուրի եւ մրցելու ազատութիւն է պահանջում։

**) Բանուորական կոլոնիաներ նրանք են, որոնց բնակիչներ այնպիսի եւրոպացի գաղթականներ, որ եկել են այնտեղ իրենց սեփական աշխատանքով ու, գլխաւորապէս- հողի մշակութիւնով պարապելու։ Դրա հակառակն են շահագործական կոլոնիաներ, որոնց բնակիչներ նոյնպէս եւրոպացիներ են, բայց սրանք եկել են, ոչ թէ սեփական աշխատանքով իրենց համար նոր հայրենիք ստեղծելու-այլ միմիայն տեղացի բնակիչներին կեղեքելու եւ յետոյ իրենց աւարի հետ կրկին եւրոպա վերադառնալու։

մանների մէջ յեղաշրջում է առաջացնում, այլ և ինքն էլ անընդհատ փոփոխելու վիճակի մէջ է գտնւում։

Արդիւնաբերական կապիտալի շահերը երբէք չեն համաձայնում վաճառականութեան ու խոշոր ֆինանսիստների — շարշիութեան այժմեան այդ զարդի — շահերի հետ և, ի հարկէ, նամանաւանդ չեն համաձայնւում միւս տիրապետող դասակարգերի — հողատերերի զինուորականութեան և բիւրօկրատիայի — շահերի հետ։ Այդ բանը հետզհետէ սկսեց արտայայտւել թէ ներքին և թէ կոլոնիական քաղաքականութեան մէջ, երբ մեր դարի առաջին կիսում արդիւնաբերական կապիտալը աւելի ու աւելի զօրաւոր դարձաւ պետութեան ու հասարակութեան մէջ։

ԺԷ և ԺԸ դարերում քաղաքականութիւնը ղեկավարող դասակարգերի համար կոլոնիաները գլխաւորապէս ապրանքներ մատակարարող վայրերի նշանակութիւն ունէին. այդ ապրանքները նրանցից իւրւում էին՝ կամ ոյժով առանց որևէ վարձատրութեան — հողեր գրաւելու, աւազակութեան, մեծ հարկեր նշանակելու ձևերի տակ, — կամ թէ չէ շնչին վարձատրութեամբ — երբ վաճառականութիւնը մոնոպոլիա էր դարձնում։ Իսկ յետոյ այդ ապրանքները բերւում էին Եւրոպա և չափազանց մեծ գներով վաճառւում այնտեղ։ — Իբրև շուկայ, կոլոնիաները Եւրոպական արդիւնաբերութեան համար երկրորդական նշանակութիւն ունէին։ Թէ որ ստիճան այն ժամանակներում Արևելեան-Հնդկաստանը շնչին նշանակութիւն ունէր, իբրև շուկայ Եւրոպական արտադրութիւնների համար, ցոյց են տալի տնտեսագէտների անընդհատ գանգատները, թէ Եւրոպան շարունակ մեծ քանակութեամբ արծաթ է կորցնում արևելեան հնդկական վաճառականութեան շնորհով։ Ոչ միայն Հնդկաստանը շատ քիչ Եւրոպական ապրանքներ էր գործածում և ոչ միայն Եւրոպային ստիպում էր շարունակ արծաթ վճարել իր մատակարարած ապրանքների համար, այլ և նա իր արտադրութիւններով մրցում էր Եւրոպայի արդիւնագործութեան հետ, նամանաւանդ մանուածքի արդիւնագործութեան ճիւղերում։ Շատ երկար ու յամառ աշխատանք էր հարկաւոր մինչև որ Լանկաշայրի գործարանատերերը կարողացան վերջապէս յաղթել հնդկական ձեռագործ ջուլհակներին ու այդպիսով նրանց մահուան դատավճիռը կարդալ, կատարելապէս սովի մատնելով նրանց։

Բանուորական կոլոնիաները աւելի մեծ նշանակութիւն ունէին,

իբրև շուկաներ, մայր հայրենիքի արդիւնագործութեան համար, քան շահագործական կոլոնիաները, բայց ամերիկական անկախութեան համար մղուած պատերազմը ցոյց տուեց, որ անկարելի էր այլ ևս երկար պահպանել այդ շուկայի մոնոպոլիան։

Այսպիսով, արդիւնաբերական կապիտալիստների համար կոլոնիաները աւելի քիչ նշանակութիւն ունէին, քան այն դասակարգերի համար, որոնք ԺԷ և ԺԸ դարերում ընդհանուր քաղաքականութեան, ուրեմն և կոլոնիական քաղաքականութեան ղեկավարողներին։

Կոլոնիաներ ընդարձակելու ձգտումը սկսում էր թուլանայ և դրա հետ մէկ տեղ բանւոր — ընիկների հետ աւելի մեղմ էին վարւում կոլոնիաներում։

Կոլոնիզատոր — երկրագործի կամ խոշոր հողատիրոջ համար երկրի ընիկ ժողովուրդը կամ մի տեսակ խոշնդոտ է հանդիսանում, կամ թէ լոկ աշխատաւոր անասունի նշանակութիւն ունին, ուստի նա կամ անխիղճ կերպով աշխատեցնում է նրան, կամ թէ որտեղ անկարելի է այդ անել, ուղղակի ջարդում ոչնչացնում է։

Մերոցեալ նահանգների երկրագործները, որոնք այնպէս եռանդով կռիւ էին մղում մարդկային իրաւունքների համար, մեծ վարձատրութիւն էին խոստանում նրանց, ով հնդիկ կանանց կամ երեխաների կտրած գլուխները կբերէր, իսկ բօէրները համբաւ ստացան իբրև Տրանսվալի սեամորթ ընիկների ամենախստաբարոյ տիրապետողներ։

Բիւրօկրատներն ու զինուորները պակաս անխիղճներ չեն։ Աւեր այնտեղ գնացողները մեծ մասամբ շատ էլ լաւ տարրեր չեն, բոլոր բախտախնդիրները, որոնք իրանց հայրենիքում յաջողութիւն չեն գտել, մեծ դեր են խաղում կոլոնիաներում։ Մայր հայրենիքի հասարակական կարծիքից հեռացած կուլտուրապէս ստոր և անպաշտպան ժողովրդի մէջ ընկնելով, որոնց զսպելու ու շահագործելու ընդարձակ իրաւունքներ է տրւած իրանց. բիւրօկրատական կամ զինուորական ձևի տակ կազմակերպւած կոլոնիաների կառավարիչները շատ շուտ են իւրացնում ընիկ վայրենի իշխանների կառավարելու բարբարոսական միջոցները։ Տեղական պայմաններին անտեղեակ լինելով և անսահման իրաւունքներ ունենալով, այդ միջոցները նրանց ձեռքում աւելի սոսկալի հետևանքներ են ունենում, քան ընիկ բռնակալների ձեռքում։

Վաճառականն էլ շատ խստաբարոյ է ղէպի կոլոնիական ար-

գիւնաբերող ժողովուրդը, նա աշխատում է, որ նրանք կարելի եղածին չափ խեղճութեան մէջ ընկնեն ու իրանից — վաճառականից — կախում ունենան, որպէսզի ինքը կարողանայ ամենաաժան գնով դուրս քամել նրանց աշխատանքի արդիւնքը։ Այդ հանգամանքը ամենավատ լերպարանք է ստանում այն երկրներում, որտեղ վաճառականը, փոխանակ տեղական արդիւնաբերողներից պատրաստի ապրանքը առնելու, ինքը իր վրայ է վերցնում այդ ապրանքների արդիւնագործութիւնը։ Իսկ այդ բանը կարելի է անել ամեն ընկերների ձեռքից նրանց հողերը խլելով ու ժողովրդին հարստահարելով, և կամ բազմակողմանի ձևերի տակ գերավաճառութիւն հաստատելով։ Այս պարագայում ընիկ ժողովուրդը կամ, գերութեան արհաւիրքին չդիմանալով, շատ շուտով մեռնում, ոչնչանում է, կամ թէ նրանք անխնա կերպով ջարդում են, եթէ նրանք մի որ և է փորձ են անում իրենց վրայից թոթափել սոսկալի լուծը, այն ինչ արդիւնաբերական կապիտալիստի համար այդ կարգի սոսկումները բոլորովին շահաւէտ բաներ չեն- նա իր ապրանքը գնողներ է փնտռում կոլոնիաներում. նրա համար կարեւորութիւն չունեն դրամից զուրկ թշուառ գերիները կամ հարկերի տակ ճնշած ու քաղցած երկրագործները, նոյնպէս և կարեւորութիւն չունեն բնութեան պարգամիտ զաւակները, որոնք պատրաստ են մի գրոշով ծախել իրենց ամենաթանդագին իրերը։ Դրանցից և ոչ մէկը միջոց չունի արդիւնագործ կապիտալի ապրանքը գնելու համար։

Այսպիսով նոյն արդիւնագործ-կապիտալիստը, որ իր հայրենիքում առանց տատանուելու կռիւ է մղում ամեն մի բանուորների օգտին առաջարկուած օրէնքի դէմ և տանջում է կանանց ու երեխաներին տաժանակիր աշխատանքով, կոլոնիաներում մի կատարեալ բարբարոս է դառնում, գերավաճառութեան ու գերութեան ամենաառանդուն թշնամի է հանդիսանում. և մինչդեռ վաճառականը զինուորների ու բիւրօկրատների հետ է ձեռք ձեռքի տուած ընթանում, արդիւնագործ կապիտալիստը միսիոնների խաղաղ գործունէութիւնը է գերադասում, աշխատելով ընիկներին պաշտպանել և երոպական պահանջներ մակարդել նրանց մէջ։

Քանի որ առևտրական կապիտալն էր թագաւորում Անգլիայում գերավաճառութեամբ պարապող ազգերի մէջ առաջին տեղը Անգլիային էր պատկանում։ Ուտրեխտի դաշնագրութիւնը (1713) թ. շահաւէտ էր համարում անգլիացիներին գլխաւորապէս նրա համար,

որ նրանց իրաւունք էր տալիս գերիներ ներմուծելու սպանական կոլոնիաները։

Իսկ երբ իշխանութիւնը արդիւնագործական կապիտալի ձեռքն անցաւ, Անգլիան գերութեան և գերավաճառութեան դէմ կռուող երկրների գլուխն անցաւ. 1806 թուականին նա արգելեց գերավաճառութիւնը, 1838 թ, ոչնչացրեց իր կոլոնիաներում, մինչդեռ մօտաւորապէս այդ միևնոյն ժամանակներում է միայն Անգլիան առաջին անգամ մտածում երեխաների աշխատանքի ժամերը յուրջ կերպով սահմանափակելու մասին, և այն էլ գործածական սիստեմի սարսափներից ստիպուած։ Մարկսը իր կապիտալում դառն հեգնելով համեմատութեան է գնում մի կողմից՝ 1833 թ, գործարանական այն օրէնքը, որով 9-ից մինչև 13 տարեկան երեխաների աշխատանքը օրական ութը ժամ է սահմանուում, բայց և թոյլատրուում է նրանց մինչև 1836 թ. օրական 12 ժամ աշխատել և միւս կողմից՝ այն ազատարար բայլը, որով ոչնչացուում է գերութիւնը և պլանտատորներին արգելուում է չափահաս խափշիկին շաբաթական 45 ժամից աւելի աշխատեցնել։ Այն ժամանակւայ կոլոնիաներում ապրող խափշիկների համար սահմանուած օրական 7 կէս ժամեայ սովորական աշխատանքը դեռ այսօր էլ մեծ յառաջադիմութիւն կարող է համարուել կուլտուրական ազգերի ազատ բանուորների համար։

Անգլիայի նման, Միացեալ նահանգներում էլ արդիւնագործական կապիտալը պատերազմ յայտարարեց հարաւային նահանգների գերութեան դէմ. մինչդեռ առևտրական կապիտալը գերիներ աշխատեցնողների կողմը բռնեց։ Նշանաւոր է այն հանգամանքը, որ միևնոյն անգլիական կապիտալիստները, որոնք Արեւելեան հնդկաստանում գերութիւնը վերացնելու կողմն էին, Միացեալ նահանգների միմիանցից բաժանուելու պատերազմի ժամանակ գերավաճառ նահանգների կողմն անցան։ Ճիշտ է, այնտեղ խնդիրը ոչ շաքարի, ոչ էլ ռոմի արդիւնաբերութեան մասին էր. այլ բամբակի — անգլիացիների արդիւնագործութեան այդ կենսական նիւթի մասին։

Կոլոնիական քաղաքականութեան հետզհետէ մեղմանալու հետ միասին սառչում էր և նրա կոլոնիաներ գրաւելու ձգտումը

Բրիտանական արդիւնաբերութեան արտահանումը այնպիսի մեծ քանակութեան հասաւ, որ անգլիական կոլոնիաները, որչափ էլ նրանք մեծ լինէին, դարձեալ անկարող էին սպառել նրա արտադրութիւնները. 1854 թ. կանոնաւոր ցուցակագրութեան առաջին տարին

— միացեալ կայսրութիւնից արտահանուած բրիտանական ապրանքների արժէքը 97 միլիոն ֆունտ ստերլինգի էր հասնում, դրա երրորդ մասը — 34 միլիոնն էր միայն գնում բրիտանական կոլոնիաները և 9 միլիոն բրիտանական Հնդկաստան, այն ինչ 21 միլիոնը գնում էր մի միայն Միացեալ Նահանգները :

Կոլոնիական շուկայի մոնոպոլիան շատ էլ մեծ օգուտ չէր տալիս անգլիական արդիւնագործութեանը. քանի նրա արդիւնաբերութիւնը անվախ էր դառնում որև է մրցումից, այնքան նա հեշտութեամբ էր հրաժարւում մոնոպոլիա անելուց: Կոլոնիական շուկաներից նրա համար աւելի կարեւոր էին ինքնիշխան պետութիւնների շուկաները, որոնցից կարելի էր օգտուել մոնոպոլիայի հակառակ ճանապարհով, այն է՝ ազատ առեւտրով: Ոչ թէ կոլոնիական, այլ առեւտրական քաղաքականութեան, առեւտրական դաշնագրութիւններ կապելու, հաղորդակցութեան միջոցները հեշտացնելու, վաճառականական յարաբերութիւններ ստեղծելու, հիւպատոսական հիմնարկութիւններ զարգացնելու և այլն, այս կարգի բաների էր կարօտում ու ձգտում Անգլիայի արտահանող արդիւնաբերութիւնը:

Նոյնպէս նրա համար շատ անհրաժեշտ էր և խաղաղութիւն պահպանել:

«Կապիտալը խուսափում է ապստամբութիւնից ու խռովութիւններից. իր էութեամբ նա վախկոտ է» — ասում է մի անգլիացի գրող, որ Մարքսը յիշում է «Կապիտալի» մէջ: — Դա ճիշտ է. բայց բոլորովին էլ ճշմարտութիւն չէ: Կապիտալը բոլորովին շահ չըստանալուց կամ քիչ շահ ստանալուց այնպէս է սարսափում, ինչպէս որ բնութիւնը դատարկութիւնից: Պէտք հղած շահը ստանալու ժամանակ կապիտալը շատ համարձակ է դառնում: Եթէ վստահ է թէ 10 տոկոս շահ պիտի ստանայ, նա ոչ մի ձեռնարկութիւնից չէ խորշում, 20 տոկոս ստացած ժամանակ կենդանանում է, 50 տոկոսի համար— պատրաստ է բիսկ անել, իսկ հարիւր տոկոս ստանալու համար նա ոտնակոխ է անում ամեն մարդկային օրէնքներ:

Սակայն, ինդրի վրայ աւելի մօտից նայելով, մենք կը տեսնենք , որ այդ կարգի բիսկ անելը աւելի յատուկ է վաճառականութեանը, քան արդիւնագործութեանը: Որչափ մեծ է վտանգը, այնչափ էլ բարձր է վարձատրութիւնը ու այնչափ էլ մեծ է եկամուտը և այդ ամենից աւելի վաճառականութեան մասին կարելի է ասել: Վաճառականութիւնն է բարեպատեհ հանգամանքներից

միշտ օգուտ քաղում: Ով բիսկ չէ անում, նա չէ շահում:

Այն ինչ արդիւնագործութիւնը, ընդհակառակը, իր զարգացման համար մշտական ու որոշ պայմաններ է պահանջում: «Ապստամբութիւնը և խլրտումները» արդիւնագործական ձեռնարկութիւնների բիսկն են միայն աւելացնում և ոչ բիսկի վարձատրութիւնը: Արդիւնագործութեան և վաճառականութեան մէջ մի ուրիշ տարբերութիւն էլ կայ, որ հարկաւոր է այստեղ ուշադրութեան առնել:

Արդիւնագործ - կապիտալիստը թէ իր հայրենիքի և թէ օտար երկրների շուկաներում մրցում է գլխաւորապէս իր բանւորների հաշուին: Այդ մրցումը սուր կերպարանք ստանալով, արդիւնագործ ազգերը աւելի ու աւելի երկու միմիանց հակառակ դասակարգերի են բաժանւում, իսկ դրա հետեանքը այն է լինում, որ դասակարգային կռիւը գնալով սաստկանում է:

Վաճառականը մէկ հատ հակառակորդի հետ միայն գործ ունի, այն է՝ մի ուրիշ մրցակից վաճառականի: Ամեն անգամ մրցումը սաստկանալիս, վաճառականների անհամաձայնութիւնն էլ է սուր կերպարանք ստանում: Եթէ արդիւնագործ կապիտալիստը ձգտում է գլխաւորապէս իր գերակշռութիւնը ամրացնել բանւորների վերաբերեալ, վաճառականն էլ աշխատում է մրցակիցների վրայ իր ոյժը մեծացնել, շուկաները մոնոպոլիա դարձնել, իսկ այդ միջազգային յարաբերութիւնների ժամանակ զէնքի ոյժով միայն կարելի է անել:

Այս հանգամանքներին ենք մենք վերագրում, որ բոլոր վաճառականական պետութիւնները, Աթէնքից և Կարթագենից սկսած հին ժամանակներում, մինչև ձենուան ու Վենետիկը միջին դարերում և Հոլանդիան ու Անգլիան նորագոյն ժամանակներում, միշտ պատերազմասէր էին: Բայց որքան աւելի էր ասպարէզ գալի արդիւնաբերական կապիտալը և, մանաւանդ, արտահանող արդիւնաբերութիւնը, այնքան աւելի էլ կապիտալիստական ազգերը խաղաղութեան պահանջ էին զգում: Այս բանը ամենից աւելի աչքի է ընկնում Անգլիայի վերաբերեալ, որ անցեալ դարում և այս դարի ընկիզներում եւրոպական պետութիւններից ամենապատերազմասէրն էր, իսկ հիմա, ամենաբիրտ վիրաւորանքների ժամանակ էլ, միշտ խուսափում է պատերազմից:

Մանչեստրականութիւնը ոչ միայն առեւտրի ազատութիւն է քարոզում, այլ և խաղաղութիւն:

Անուամենայնիւ, նորանոր կոլոնիաներ ձեռք բերելու ձգտումը շատ վատ է շաղկապւում խաղաղութեան հետ։ Քանի կոլոնիաները ընդարձակւում են, այնքան էլ պատերազմներ ծագեցնելու առիթները շատանում են և ամեն մի նոր երկիր գրաւելը ոչ միայն այդ կրիտիկական առիթներն են աւելացնում, այլ դրացիներին էլ են դրդում միևնոյն բանը անել և, այդպիսով, պատերազմելու վտանգը աւելի ևս մեծանում է։

Այս բոլորը ի նկատի առնելով, մենք բոլորովին չենք զարմանայ այն երևութի առիթով, որի վրայ ի զուր չէ մատնանիշ արել պ. Բէէրը իր անգլիական միապետականութեան մասին գրած յօդուածում « Neue Zeit » - ի մէջ (XVI, 1, երես 302) այն է՝ որ Անգլիայում, մանչեստերականութեան շրջանի ժամանակ, կոլոնիաները նկատւում էին իրրև մի հին արիստոկրատական հասարակական կազմակերպութիւնից մնացած մնացորդ, որը աւելի վնասակար էր համարւում, քան օգտակար։ Զատ բնորոշ են պ. Բէէրի մէջ բերած Դիզրայէլիի խօսքերը. «Կոլոնիաները — մեր վզին կապած ջրաղացի քարեր են»

Որչափ աւելի էր տարածւում մանչեստերականութիւնը Եւրոպայում, այնքան էլ աւելի էր տարածւում և այդ գաղափարը, և ահա մենք տեսնում ենք, որ կոլոնիաներ ընդարձակելու տենդը բոլորովին դադարում է. 40-ական թուերից մինչև 70 ականը ոչ մի նշանաւոր ընդարձակում չէ կարելի նկատել. եթէ չը հաշուենք Աւստրալիայում եւ հարաւային Աֆրիկայում գրաւած երկրների ընդարձակումը, որ տեղի են ունեցել ոչ թէ երոպական արդիւնաբերող կապիտալի պէտքերի համաձայն, այլ այդ երկրների երկրագործ բնակիչների բազմանալու և ոսկու հանքեր գտնելու պատճառով։

Միակ երկու ընդարձակ երկրները, որտեղ XVIII դարը դեռևս գրաւելու ասպարէզ էր թողել երոպացիներին, — Աֆրիկան և Չինաստանն էին։ Եւրոպայի կապիտալական ազգերն իրար հետ մրցում էին, Աֆրիկէն ուսումնասիրելու նպատակով էկսպեդիցիաներ ուղարկելով, առևտրական յարաբերութիւններ հաստատելով և առևտրական ճանապարհներ գտնելով։ Միևնոյն ժամանակ նրանք պարտաւորւեցին «անձեռնմխելի» թողել այդ երկրների տեղական պետութիւնները։

Այդ ամբողջ ժամանակաընթացքում Անգլիան երեք պատերազմ է մղել Չինաստանի դէմ — 1840, 1850 և 1860 թուականներին.

բայց այդ պատերազմներից և ոչ մէկը նպատակ չէ ունեցել մի որ և է մոնոպոլիա ձեռք բերել կամ նոր երկրներ գրաւել։ Անգլիան պահանջում էր միայն, որ Չինաստանը բոլոր ազգերին էլ թոյլ տայ իր երկրում առևտուրով պարապելու։ Վերջին երկու պատերազմների ժամանակ Անգլիան ու Ֆրանսիան իրար հետ միացած էին, մինչդեռ նախորդ դարում այդ երկու պետութիւնները կատաղի կռիւ էին մղում միմիանց դէմ կոլոնիական երկրների պատճառով։ 1840 թ. պատերազմը վերջացաւ Հոնգ-Կոնգ նաւահանգստի գրաւումով։ Միւս երկու պատերազմներով ոչ մի կտոր հող էլ չդրաւեցին, թէև այդ պատերազմներից մէկի ժամանակ դաշնակից պետութիւնների զօրքերը Պէքինի դռներին հասան։ Բայց նրանք իսկի չէին էլ մտածում, այդ երկիրը գրաւելով, իրանց վզին մի ծանր բեռ կապել։ Նրանց միակ ցանկութիւնն այդ երկրի թէկուզ մի քանի կէտերում միայն ազատ վաճառականութեան ապահովութիւն ստանալն էր։

Մարդասիրութիւնն ու համեստութիւնը չէին, որ նրանց խանգարեցին աւելի մեծ պահանջներ անելու։ 1840 թ. պատերազմը ծագեց նրանից, որ Անգլիան պահանջում էր թոյլ տալ ազատ կերպով ոպիոն ներմուծել Չինաստան և Պէքինի կայսերական սամանային պալատը կողոպտողներին ամեն բան կարելի է վերադրել բացի համեստութիւնից։ Այն ժամանակներում համոզուած էին որ անդրովկիանեան նոր երկրներ գրաւելը աւելորդ վնասակար է կապիտալիզմի շահերին քան օգտակար, միմիայն և միմիայն այդ էր պատճառը, որ նրանք չինական կայսրութեան ամբողջութիւնը պահպանեցին։

Իսկ հիմա։ Հիմա մենք տեսնում ենք, որ ամենքն էլ Աֆրիկայում ու Չինաստանում նոր երկրներ գրաւելու տենդի մէջ են ընկել դարձեալ ամենուրեք հաւատացնելով, թէ միմիայն այդ եղանակով կարող է ներկայ հասարակութիւնը իր գոյութիւնը պահպանել։ Հովանաւորող մաքսերը նորից ասպարէզ են գալիս, իսկ դրա հետ միասին պարգևներ են նշանակում արտահանող արդիւնաբերութիւնների համար և նպաստներ են տալիս արդիւնաբերութեան թոյլ ճիւղերը դարգացնողներին։ Առևտրի մոնոպոլիաներ հաստատելն ու առևտրական պատերազմների վերսկսելն են պակաս միայն, որ մենք վերադառնանք մերկանտիլիզմի անտեսական համոզումների թագաւորող ժամանակներին։

Ինչ պատահեց այս վերջին երկու տասնեակ տարիներում։ Չլինի թէ մանչեստրականները սոցիալ— դեմոկրատներ էին, վաճա-

ռականութեան շուկաները սահմանափակելով, խեղդել արտադրելու կապիտալիստական եղանակը։ Կամ գուցէ նրանք անփորձ իդիոլոգներ էին, որ չէին հասկանում գործի էութիւնը։ Կարծում ենք, որ եթէ կար մէկը, որ արտահանող արդիւնաբերութեան շահերի արտայայտիչը կարող է լինել ու նրանց սպառելու համար շուկաներ ստեղծելու պահանջը հասկանալ — դա իսկապէս մանչեսթրականները էին։

Սակայն խնդրի վրայ աւելի մօտիկից նայելով պարզւում է, որ կոլոնիական քաղաքականութեան նորագոյն շրջանը առաջ է եկել ոչ թէ արդիւնագործութեան զարգացման պահանջների համաձայն, այլ մէկ կողմից՝ այն դասակարգերի պահանջների, որոնց շահերը բոլորովին չեն համապատասխանում տնտեսական զարգացման պահանջներին, իսկ միւս կողմից, կառավարչական մարմինների պէտքերի համաձայն, որոնց շահերը սատիկ հակասում են աւելի բարձր աստիճանի քաղաքականութեանը։ Ուրիշ խօսքերով ասած, կոլոնիական քաղաքականութեան վերջին շրջանը, մաքսերը հովանաւորող քաղաքականութեան նման յետադիմականների ստեղծագործութիւնն է։ Այդ քաղաքականութիւնը բոլորովին անհրաժեշտ բան չէ տնտեսական զարգացման համար, այլ շատ անգամ ուղղակի վնասակար էլ է։ Եւ դա ոչ թէ Անգլիայի կողմից է ծագում, այլ Ֆրանսիայի ու Գերմանիայի, իսկ եթէ Անգլիան էլ է այդ քաղաքականութեանը հետևում ընդհանրապէս խօսելով նա այդ անում է ժամանակի պահանջին յարմարելով միայն և ոչ թէ ներքին զրդումից — նրա վարմունքը պաշտպանողական և ոչ յարձակողական բնաւորութիւն է կրում։

III

ՌՈՒՍԱՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

Ռուսաստանը Անգլիայի կատարեալ հակապատկերն է ներկայացնում։ Եթէ Անգլիան Եւրոպայի յարձակումներից ազատ էր մնում իր կղզեցած դիրքի շնորհով, Ռուսաստանին էլ ընդարձակ սակաւաբնակ երկրների անհիւրասիրութիւնն էր պաշտպանում։ Ռուսաստանն էլ Անգլիայի նման կարող էր եւրոպական գործերի մէջ չխառնուել, երբ այդ նրա համար ձեռնտու չէր. զրանք երկուսն

էլ մի յայտնի ճարտարութեամբ կարող էին եւրոպական ընդհարումներից օգուտ մեկնել։ Եթէ Անգլիան, իր կղզեցած դիրքի շնորհով, ստիպուած էր իր տիրապետութիւնները ընդարձակել անդրովկիանեան երկրներում, Ռուսաստանին էլ իր աշխարհագրական դիրքի շնորհով, վիճակուած էր ասիական մեծ պետութիւն դառնալ։ Արդէն շատ վաղ նա Սիբիրը զրաւեց, Ռուսներին այնտեղ գրաւողը միևնոյն բանն էր, ինչ որ ֆրանսիացիներին դէպի Կանադա, այն է մորթի առևտուրը։ Ռուսաց մորթերի առևտուրը միջին դարերում արդէն մեծ նշանակութիւն էր ստացել։ Հաղիւ էին ռուսները մոնղոլներին վանել ու իրենց համար ազատ ճանապարհ բաց արել դէպի Արևելք, երբ կողակները անցան Ուրալը և թանդակին մուշտակաւոր գաղանների հետևից ընկան։ 1639 թ. նրանք խաղաղ ովկիանոսի ափերին հասան, անցան ովկիանոսը և Ալեասկա թերակղզին զրաւեցին— շարունակ մուշտակաւոր անասուններ որսալու նպատակով։ Ալեասկայի ոսկու հանքերի մասին այն ժամանակ դեռ ոչ ոք գաղափար չունէր։

Ոչ թէ Սիբիրի պտղաբեր հարաւը այլ և նրա անհիւրընկալ, բայց և մուշտակաւոր անասուններով հարուստ հիւսիսը զրաւեցին ամենից առաջ։

Բայց մինչև իսկ մեր դարումն էլ Ռուսաստանը երկար ժամանակ շատ քիչ էր ուշադրութիւն դարձնում իր ասիական երկրների վրայ։ Մորթի առևտուրով պարապողներից զատ, այնտեղ ուղարկւում էին յանցաւորները միայն և առհասարակ այնպիսի մարդիկ, որոնցից մայր երկիրը ուզում էր ազատ մնալ։

Նրա ամբողջ ուշադրութիւնը Եւրոպայի վրայ էր դարձուած, նա ձգտում էր ամեն կողմով Արևմուտքին մօտենալ, մինչև իսկ երկրներ զրաւելով արդէն հնացած եղանակի մէջ էլ նա Արևմուտքի օրինակին էր հետևում։ Վաճառականութիւնը զարգացնելու համար Ռուսաստանին անհրաժեշտ էր զրաւումներ անել, որ կարողանար առևտրական մեծ ճանապարհ — ծով — ձեռք բերել։ Նա աշխատում էր Զուգիայի ու Լեհաստանի հաշվին Բալտեան ծովին հասնել ու նրա ափերում տարածուել. իսկ Թիւրքիայի հաշվին էլ Սև ծովին հասնել։ Բայց նրա դիտաւորութիւնները էլ աւելի հեռուն էին անցնում, նա աշխատում էր այդ ծովը զրաւել թէ արևելքից և թէ արևմուտքից։ Նրան զուտ ռուսական ծով դարձնել և վերջապէս զրաւելու Կոստանդնուպոլիսը — դէպի Միջերկրական ծովի արևելեան

աւազանը տանող դռների այդ բանալին։

Բայց այդտեղ նա Անգլիայի հետ ընդհարում ունեցաւ։ Հօրաւոր Ռուսաստանի ընդարձակիլը, — որի անմիջական հետեանքը այն պիտի լիներ, որ թոյլ Թուրքիայում հովանաւորող մաքսեր ու մոնոպոլիաներ ստեղծէին, մինչդեռ այժմ Թուրքիան ստիպուած է առևտրի ազատութիւն պահպանել իր երկիրներում, — և այնպիսի մի առևտրական ու պատերազմական դիրքի զրաւումը, ինչպէս Պոլիսն էր Անգլիան չէր կարող թոյլ տալ։

Եթէ միւս Եւրոպական պետութիւնները մի մի անդամ Ռուսաստանի կողմն էին թեքւում ու թոյլ էին տալիս հրապուրել նրանց Թուրքիան բաժանելու և դրանից մաս ու բաժին ստանալու յոյսերով, Անգլիան չէր կարող խաբուել այդպիսի կարթից։ Եթէ Թուրքիայի մի մասը Ռուսաստանի փոխարէն Աւստրիայի ձեռքն ընկնէր, որ նոյնպէս հովանաւորող քաղաքականութեան հետեւող պետութիւն է, ի հարկէ Անգլիայի վնասը դրանով չէր պակասի։ Այդ էր պատճառը, որ արևելեան խնդրի մէջ Անգլիան է միշտ Ռուսաստանին դիմադրութիւն ցոյց տուողը։ Ծովի կողմից Ռուսաստանը անզօր է Անգլիային վնասելու, իսկ նրա ամենամեծ ու նշանաւոր մասին — Հնդկաստանին — Ռուսաստանը կարող էր ցամաքային ճանապարհով հասնել։ Ինչ որ Նապոլէօնը իզուր ջանքեր էր թափել անելու, Ռուսաստանը շատ հեշտութեամբ կարող էր անել, — մեր խօսքը անգլիայի հետ Հնդկաստանում յաջողութեամբ կռուելու մասին է։

Ճիշտ է, այդ երկիրը ինչպէս մենք տեսանք, Բրիտանական արդիւնաբերութեան ու վաճառականութեան համար այն նշանակութիւնը չունի, ինչ որ յաճախ վերագրում են նրան։

1892 թ. միացեալ կայսրութիւններից 227 միլիոն ֆունտ ստերլինգ բրիտանական ապրանք է արտահանուած և այդ ամբողջ գումարից 28միլիոն էր միայն Հնդկաստան ներմուծուել, այդ միևնոյն թուականին 424 միլիոն ֆունտ ստերլինգ ապրանք էր ներմուծուել Անգլիա և դրանց միայն 30 միլիոնն էր Հնդկաստանից բերուած։ Դեռ մինչև հիմա էլ Հնդկաստանը աւելի կարևոր է իրրև *շահագործելու մի վայր*, քան իրրև ապառելու շուկայ։ Անգլո-Հնդկական պետութեան բոլոր չաղ պաշտօնները, — որ քիչ չեն ադմինիստրացիայի բանակի, դատաւորական և այլ հիմնարկութիւնների մէջ, — անգլիացիների ձեռքին են դտնւում, որոնք գալիս են այդ երկիրը շուտով հարստանալու և կրկին հետ փախչելու նպատակով։ Այդ կար-

գի մարդոց պենսիոն վճարելու համար միայն Հնդկաստանը տարեկան 4 միլիոն ֆունտ ստերլինգ է ուղարկում Անգլիա։

Դրա վրայ պէտք է աւելացնել և այն, թէ որպիսի մեծ նշանակութիւն է ստացել Հնդկաստանը խոշոր ֆինանսիստների, բանկիր դասակարգի — կապիտալի թագաւորութեան այդ ամենազգաւոր հրամանատարների — համար։ Բազմաթիւ ռազման հաստատութիւններ ու երկաթուղիներ են շինուած այնտեղ, Անգլիայի ազդեցութեան տակ և անգլիական կապիտալի օգնութեամբ։ Աւելացրէք սրան և այն բազմաթիւ մասնաւոր ձեռնարկութիւնները, որոնք անգլիական փողերով են հիմնուած և որոնցից ստացած հասոյթները շարունակ Անգլիա են հոսում։ Պէրիստ Հասսէս «Handwörterbuch der Staatwissenschafteu» ի մէջ տպուած տեղեկութիւնների համաձայն, Հնդկական բիւջէի 82 միլ. ֆունտ ստեր. ծախսերի ամբողջ 21 միլ. Անգլիա է գնում (այդ 1892 թ. էր, իսկ այդ ժամանակից ի վեր ծախսերը բաւական աւելացել են), Անգլիայի Հնդկաստանից ստացած տարեկան հասոյթի գումարը անշուշտ կլս միլիարդ մարկից աւելի է։

Այդպիսի իւղոտ պատառ հեշտութեամբ չեն դիջանում։ Սակայն Անգլիացիների տիրապետութիւնը Հնդկաստանում բաւական խախուտ է։ Ճիշտ է, երբի աւելի ինտելիգենտ դասակարգերը խոստովանում են, որ չնայելով այդ բոլոր շահագործութիւններին բրիտանական տիրապետութեան շնորհով երկիրը շատ աւելի է զարգացել, քան նա կարող էր զարգացնել բնիկների բռնապետական բեժիմի տակ, նրանք խոստովանում են նաև, որ այդ խառնիճաղանճ ցեղերից կազմուած պետութեան մէջ դեռ ազգային միութիւն չկայ, թէ՝ Անգլիացիներին վանդելուց յետոյ, իրանք ոչ թէ ազգային անկախութիւն ձեռք կը բերեն, այլ մի ուրիշ զօրաւոր ոյժի պիտի հպատակ դառնան, և որ, վերջապէս, ոչ մի օտար բեժիմից իրանք չեն կարող այնպիսի ազատութիւն ու այնպիսի ձեռնտու կառավարութիւն ստանալ, ինչպիսին տալիս է այս վերջին տասնեակ տարիներում ռամկավարական Անգլիայի տիրապետութիւնը։

Անգլիացիները մի այնպիսի ժողովուրդ են շահագործում, որոնց վիճակը ոչ մի կերպ չի կարելի բաւարար համարել։ Ժողովրդային ազգեա ամբոխը իր կարօտութիւնը միայն ներկայի մէջ է տեսնում, ամեն մի փոփոխութիւնից նա բարելաւութիւն է սպասում և չէ մտածում, թէ այդ փոփոխութիւնը կարող է աւելի ևս աւելացնել

իր կարօտութիւնը։ Այդ պատճառով էլ Անգլիական բիժիմը չէ կարող Հնդկական բնակիչների պաշտպանութեան վրայ յոյս դնել։ Նա միշտ պիտի պատրաստ դանի այն պարագայի համար, որ արտաքին թշնամու յարձակման ժամանակ, Հնդկաստանի ժողովուրդը կօգնի այդ վերջինին։

Անգլիայի բաղդից Հնդկաստանը շատ քիչ մատչելի երկիր է։ Ծովային ճանապարհի վրայ Անգլիան է թագաւորում, որ Նապոլէոնի պատերազմների ժամանակ Կապի երկիրն էլ միացրեց. ցամաքային սահմանի վրայ Հնդկաստանին երկրագնդին ամենաբարձր ու սոսկալի լեռների շղթան է պաշտպանում, իսկ դրանց առջևումն էլ անապատներ են տարածւում։ Իրա վտանգը արդէն ճաշակել է ռուսաց զօրքը, որ 1839 թ. ուզարկւեց Խիւան նուաճելու համար, բայց բրանների ու ջրի պակասութեան պատճառով ստիպւած էր յետ դառնալ, մանաւանդ մի երրորդ մասը կորցնելուց յետոյ։ Ճիշտ է, Ռուսաստանը շարունակ ընդարձակում էր իր սահմանները դէպի Հնդկաստան մինչև Ասիայում, բայց նա այդ պատութեան դէմ արշաւելու ընդունակ դարձաւ այն ժամանակ միայն, երբ սկսեց ժամանակակից հաղորդակցութեան միջոցներով օգտւել և Կասպեան ծովից երկաթուղի անցկացրեց անապատի միջով (1880—1888)

Այդ ժամանակւանից իվեր Ռուսաստանի կողմից յարձակում գործելու վտանգը սկսեց սպառնալ Հնդկաստանին, և հատատապէս կարելի է ասել, որ հենց առաջին անգլօռուսական պատերազմի ժամանակ Ռուսները Հնդկաստանի վրայ կը յարձակւեն։

Այդ յարձակման առաջն առնելը Անգլիայի ամենատիպողական խնդիրն է դառել։

Եթէ 1887 թուականից սկսած նա իրարու յետևից մաս առ մաս Հնդկաստանին էր միացնում Աղանիստանին սահմանակից լեռնային երկիրը, եթէ աշխատում էր Աղանիստանին իր վասալը դարձնել ու հիմա էլ պատերազմ է սկսել սահմանակից ցեղերի դէմ, — դա ոչ թէ «այդ շարչի ազգի նոր ու նոր երկրներ գրաւելու անկուշտ ախնչի պատճառով է», այլ պարզապէս նա ուզում է փակել այն դռները. որտեղով այնքան արիական ու մոնղոլական աշխարհակալներ են անցել Հնդկաստան։ Դա լոկ մի բնական, բայց և հեռատեսական քայլ էր, որ Անգլիան ստիպւած էր անել, որպէսզի կարողանայ Ռուսաստանի անդուսդ յարձակման առաջն առնել, որը արդէն բոլորովին մօտեցել է Հնդկական սահմաններին։

Միջին ասիական ճանապարհից զատ, պակաս վտանգաւոր չէ Հնդկաստանի համար և միւս նորագոյն ճանապարհը — Սուէզի ջրանցքը։ Այդ ճանապարհի շնորհով բոլոր եւրոպական մեծ պետութիւններից Անգլիան ամենից հեռու է ընկնում Արևելեան Հնդկաստանից։ Ֆրանսիայի և Ռուսաստանի համար ամենից աւելի կարճացաւ հիմա ճանապարհը, ինչ մանաւանդ վտանգաւոր դառաւ այն ժամանակւանից իվեր, երբ Ռուսաստանը զօրաւոր պատերազմական նաւատորմիղ սկսեց ունենալ Սև ծովի վրա։

Անգլիան շատ իզուր ջանքեր թափեց Սուէզի ջրանցքի բանալը խանգարելու։ Ֆրանսիայի ազդեցութիւնը Եգիպտոսում Անգլիականից աւելի էր, և 1869 թ. ջրանցքը արդէն պատրաստ էր։ Իսկապէս դա շատ լաւ ժամանակին վրայ հասաւ, որովհետև դրանից քիչ յետոյ ջրանցքը հովանաւորողի իշխանութիւնը տապալւեց, որի հետևանքներից մէկն էլ 1856 թ. Պարիզի դաշնագրութեան գրժումը եղաւ, այն դաշնագրութեան, որով ոչ մի պետութեան թոյլ չէր տւում Սև ծովի վրա պատերազմական նաւատորմիղ պահել։

Եթէ Անգլիան այս հանգամանքների մէջ էլ Արևելեան Հնդկաստանի ծովային ճանապարհը ապահով դարձնելու հոգ չտանէր, այդ պարագայում պատերազմի ժամանակ, նա Հնդկաստանը իր ճակատագրին մատնած պիտի լինէր։ Կիպրոսի գրաւումը 1878 թ. և Եգիպտոսինը 1882 թ. վերոյիշեալ հանգամանքների բնական հետևանքներն էին։ Որչափ էլ տարբեր չլինէին Անգլիայի այն ժամանակւայ գործունէութեան էդանդները, նամանաւանդ այդ վերոյիշեալ դէպքերում, այնուամենայնիւ նրա գործողութիւնների դրդիչ պատճառը աւելի պաշտպանողական, քան յարձակողական բնաւորութիւն է կրում։

Ռուսաստանի յարաբերութիւնը Անգլիայի վերաբերեալ փոքր ինչ փոխւել է այս վերջին տասնեակ տարիներում, բայց հաղիւ թէ աւելի բարեկամական է դառել։ Այն օրանից, ինչ Ռումանիան ու Բուլղարիան ինքնուրոյն բաղաքականութիւն վարելու ընդունակութիւն ցոյց աւելցին, եւրոպական Թիւրքիայի բաժանումը Ռուսաստանի համար կորցրեց իր նշանակութիւնը։

Մինչ այդ՝ Ռուսաստանում էլ կապիտալիստական մեծ արդիւնագործութիւն առաջ եկաւ, որ արագութեամբ զարգանում է և, ուրս գիւղացիների աղքատութեան շնորհով, այլևս չէ կարողանում նեղքին շուկայով բաւականանալ։ Համաշխարհային շուկայի վրայ նա

անընդունակ է մրցելու, այլ կարող է միայն հաստատուել այնպիսի տեղերում. որտեղ կառավարութիւնը նրանց մենաշնորհում կտայ, կամ գոնէ միւս մրցակիցների առաջ ընդարձակ առաւելութիւններ կը-պարգեւի: Ոչ թէ համաշխարհային շուկան ընդարձակելու կարողութիւն ունի ռուսաց արդիւնագործութիւնը, այլ նոր շուկաներ գրաւելու և դրանց օտար ազգերի արդիւնագործութեան մրցումից պաշտպանելու. մի խօսքով նրան հովանաւորող ու երկրներ գրաւող քա զաքականութիւն է հարկաւոր, ճիշտ նախորդ դարի քաղաքականութեան ոգով:

Ահա այդ է պատճառը, որ Ռուսաստանը մայրենի արդիւնագործութեանը գոհացում տալու համար, միշտ ձգտում էր իր սահմանները ընդարձակել, բայց ոչ թէ դէպի Եւրոպա, այլ դէպի Ասիա: Նա մէկը միւսի ետեւից Միջին Ասիայի նահանգներն է գրաւում, աշխատում է Պարսկաստանն ու Աւղանիստանը իր վասալները դարձնել, և, կարելի եղածին չափ շատ հողեր գրաւել հիւսիսային Չինաստանում: Ամեն տեղ ուր որ Ռուսաստանը հաստատւում է, իսկոյն աշխատում է, որչափ կարելի է, դուրս վանել օտար երկրների արդիւնաբերութիւնները մաքսերի միջոցով: Այդպիսով Ռուսաստան ընդարձակելն ու համաշխարհային շուկայի սահմանափակումը համանիշներ են, ինչ ի հարկէ շատ վնասակար բան է նախ անգլիայի և ապա միւս ազգերի համար, որոնց արդիւնագործութեան շահերը ազատ առևտուր են պահանջում:

IV

ՑԻՏԱԴԻՄԱԿԱՆ ԿՈԼՈՆԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ահա երկու տասնեակ տարի եղաւ, ինչ Եւրոպայի միւս ազգերն էլ միևնոյն ուղղութեամբ են գործում: Անգոյն մանչեստրականութիւնը ամեն տեղից դուրս է վանւած բացի Անգլիայից: 50 ական թուականներին վերջերում երոպայում իրականացան այն բոլորը, ինչոր այնքան ձգտում էին իրականացնել 1848 թուականների գործիչները — Անգլիական բանուոր դասակարգի արիստոկրատ մասը ընտրողական իրաւունք ստացաւ, Աւստրիայում սահմանադրութիւն հաստատուեց, պարլամենտարիզմի հիմունքների վրայ. Գերմանիայի միութիւնը կատարուեց և ընդհանուր ընտրողական իրաւունք ստացաւ ժողովուրդը

Ֆրանսիայում էլ հանրապետութիւն հաստատուեց:

Բայց այս բոլոր արմատական բարեփոխութիւնները կոնտինենտի վրա տարբեր կերպով ազդեցին, քան Անգլիայի վրա: Այս վերջինում խոշոր կապիտալիստական արդիւնագործութիւնը գերակշռութիւն ստացաւ:

Հենց այդ պատճառով էլ մանչեստրականութիւնը տնտեսական յետադիմութիւնից ազատ մնաց Անգլիայում. այնտեղ ոչ ոք չէ մտածում միութիւններ հաստատելու, պարապմունքի տեղափոխութեան և առևտուրի ազատութեանը դիպչել:

Տարբեր բան է կոնտինենտում: Այնտեղ մենք ամենուրեք բազմաթիւ մանր բուրժուազիա և մանաւանդ բազմաթիւ գիւղացիներ ենք նկատում, որոնք շատ երկրներում ժողովրդի գերակշիռ մեծամասնութիւնն են կազմում: Ռամկավարութեան տարած յաջողութիւնների շնորհով, դրանք դարձան երկրի տէրերը և ոչ թէ պրոլետարիատը, բայց այն էլ ըստ երևոյթին ;որովհետև մանր բուրժուազիան ու գիւղացիները երբէք չեն կարողացել ինքնուրոյն քաղաքականութիւն վարել: Սկզբում, երբ դեռ նրանց ոսկու լեռներ էին սպասում նոր քաղաքական ու տնտեսական ազատութիւնից, նրանք լերելիզմին յարեցին, բայց շուտով նկատեցին, որ խոշոր արդիւնագործութիւնը քանդում է իրենց, տապալում է արհեստը և գիւղացիներին զրկում հողերից, իրականանալով Անգլովկիանան երկրներից բերւած կենսական մթերքների մրցումը: Զարմանալի չէ ուրեմն, որ այդ դասակարգերը երես դարձրեցին մանչեստրականութիւնից և սկսեցին այն դասակարգերի յետևից գնալ, որոնք վաղուց արդէն արդիւնագործ բուրժուազիայի հակառակորդներն էին, և ամենից առաջ խոշոր հողատէրերի կողմը նրանց անցան. Թէև խոշոր հողատիրութիւնը ոչ մի տեղ այնպէս տարածւած չէ, ինչպէս Անգլիայում, բայց կոնտինենտի վրա նա աւելի շատ քաղաքական իրաւունքներ ունի, քան այնտեղ:

Բացի դրանից կայ և մի ուրիշ հանգամանք. Անգլիայում թէ կապիտալի և թէ պրոլետարիատի այժմեան բոլոր իրաւունքները ձեռք են բերւած ժողովրդական մասսայի մղած կռիւների շնորհով: Իսկ կոնտինենտում ժողովրդական մասսան զօրաւոր չէր: Եւ նրա ձեռք բերած իրաւունքները այս կամ այն պետութեան զօրքի յաղթանակների (իսկ աւելի յաճախ եւ պարտութիւնների) հետևանքն են եղել: Ազատութեան հետ մէկ տեղ կոնտինենտի բոլոր զօրաւոր ազգերն վրէն փաղձձել են և միլիտարիզմ, որի շնորհով յաղ-

թիւն տարաւ Պրուսիան։ Ընդհանուր զինուորագրութիւնից դատ, այդ միլիտարիզմի զլխաւոր հիմունքներից մէկն էլ պլոսֆիսիոնալ օֆիցերների կաստային բաժանումն է։

Այդ օֆիցերները գլխաւորապէս խոշոր հողատէր դասակարգի շրջանից են դուրս գալիս. այդպիսով, թէ մէկի և թէ միւսի շահերը սատանիկ շաղկապուած են միմեանց հետ։ Մէկի իրաւունքների մեծանալով անպատճառ աւելանում են և միւսի իրաւունքները։

Այդ բոլոր տարրերը միանում են մանչեսթրականութեան վրայ յարձակուելու ժամանակ. նրանցից ոմանք պահպանում են պարտադիր մունջի ազատութիւնը, միւսները — առևտրի ազատութիւնը, երրորդը — տեղափոխուելու ազատութիւնը, չորրորդը — չափազանց խ ազատ քաղաքականութիւնը, հինգերորդը — բիւրոկրատայի ցոյց տուած հոգատար ջանքերին հակառակելը։

Իրերի այս դրութեան շնորհով կոլոնիական նոր քաղաքականութիւն առաջ եկաւ, եւրոպական զանազան պետութիւնները, զլուխները կորցրած, նորանոր կոլոնիաներ ձեռք գցելու յուսից ընկան։ Բոլորովին ճիշտ է, արդիւնաբերական կապիտալն էլ է ուզում այդ քաղաքականութիւնից օգուտ, բայց նա չէր կոլոնիական շարժումին դարձ տուող։

Իւրաքանչիւր տարի կուտակուող յաւելեալ արժէքի քանակութիւնը այնքան մեծ է, որ թէպէտ կապիտալիստական պետութիւններից շատերի մէջ արդիւնաբերութեան, վաճառականութեան, պետական ու համայնական պահանջները զնալով աճում են, այնուամենայնիւ շարունակ աճող կապիտալի համար շահաւէտ գործածութեան տեղ չեն գտնում։ Նրանք սոսկալած են իրանց կապիտալի աւելի ու աւելի մեծ մասը արտասահման տեղափոխել, որպէս զի կարողանան արդիւնաւէտ ձեռնարկութիւններ անել.

Այդ բանի մէջ ամենախոշոր ֆինանսիստները միջնորդի դեր են կատարում և միևնոյն ժամանակ ամենամեծ օգուտները նրանք են ստանում։ Բայց ինքը, է, ոչ մի տեղ նրանք այնպէս ազատ չեն զգում իրանց. ինչպէս իրանց սեփական պետութեան հովանաւորութեան տակ — իզուր չէ, որ ամբողջ կառավարական դեկը նրանք իրանց ձեռքն են առել։ Կառավարութեանը դրդում են նրանք կոլոնիաներ ձեռք բերել, որտեղ կարելի լինի առանց կոնտրոլի, բայց և կառավարութեան հովանաւորութեան տակ, իրանց գործերը դրստել։

Կոնտինենտի պետական գործիչները նամանաւանդ այն ժամանակ էին սիրով դիջանում ֆինանսիստների այդ ձգտումներին, երբ պետութեան ներքին վիճակը աւելի անմխիթար էր դառնում և նրանք առիթ էին տրամում հասարակութեան ուշադրութիւնը աւելի արտաքին գործերի վրայ դարձնել։

Ի հարկէ, նոր Անդրովկիանեան երկրներ գրաւելու անհրաժեշտութիւնը բացատրելու համար զեղեցիկ ճառեր չեն պակասում։ Ամենից առաջ ժողովրդի զաղթող մասի այժերը իրանց հայրենիքի օգտին ծառայեցնելու անհրաժեշտութեան մասին է խօսում, բայց բանը նրանումն է, որ հենց ամենից աւելի մեծ եռանդով կոլոնիաներ ընդարձակող ազգը — Ֆրանսիան — տառապում է իր բնակիչների բազմանալու ցաւից։ Կոլոնիական քաղաքականութիւնը այնպիսի մեծ այժեր է պահանջում, այնքան մարդկային կեանքեր է կլանում, որ ուղղակի պատճառ է դառնում ժողովրդի նուազելուն։

Գերմանիայում գործը էլ աւելի լաւ է դրուած։ Մեղանում աւելորդ բնակիչների պակասութիւն չկայ, գաղթականութիւնն էլ բաւական խիստ է, բայց ոչ տեղ կոլոնիաներ վերցնել։ Երբ 70-ն թուականի վերջերում նոր կոլոնիական քաղաքականութիւն սկսեց, միայն բնական երկրներում և արևադարձերի տակ Ասիայում ու Աֆրիկայում կարելի էր առանց պատերազմի երկրներ գրաւել։ Այդ երկրներից ոչ մէկը պէտքական չէ եւրոպացի գիւղացիներ բնակեցնելու համար, մինչդեռ գլխաւորապէս հենց այդպիսի երկրներ պէտք է աչքի առաջ ունենալ բանուորական կոլոնիաներ հաստատելու ժամանակ։ Ճիշտ է, իր ժամանակին շատ փայլուն գոյներով էին նկարագրում Անդրա-Պէլիենամ և Արևելեան-Աֆրիկան, ասելով թէ այդ երկրները մեծ նշանակութիւն պիտի ունենան գերմանական գաղթականութեան համար, բայց այդ բոլորը շռայլասանութիւն էին միայն։

Ենթադրենք, թէ Գերմանիան երբեմն պատերազմի միջոցով այնպիսի երկիր կը զրաւի, որ շատ յարմար կը լինի գերմանացիներ ընակեցնելու համար. նոյն իսկ կան մարդիկ, որոնք աչքն են տնկել հարաւային Բրազիլիայի վրայ։ Սակայն, եթէ ենթադրենք նոյն իսկ, թէ Գերմանիան պատրաստ է դրա համար պատերազմ սկսել ոչ միայն Բրազիլիայի. այլ և Միացեալ-Նահանգների, գուցէ նոյնիսկ և ուրիշ շահագրգիռ պետութիւնների հետ էլ, այնուամենայնի հարցը

կարելի է մեծ յոյսեր ունենալ, թէ իրանց հայրենիքից զատ ող գերմանացիները կըզան այդ երկրում ընակութիւն հաստատելու: Ամեն անգամ, երբ այդ բանւորական կոլոնիաների մասին խօսք է լինում, միշտ գլխաւորապէս աչքի առաջ ունին անգլօ-ամերիկական կոլոնիաները. բայց չըպէտք է մոռանալ, որ այդ կոլոնիաները հիմնողը ոչ թէ Անգլիայի կառավարութիւնն է, այլ այն փախստականները, որոնք ուզեցել են իրանց ազատութիւնը պահպանել մայր հայրենիքի ազդեցութիւնից: Եւ եթէ Աւստրալիան ու Կանադան այսօր նոյնչափ դրաւիչ են գաղթականների համար, ինչպէս և Միացեալ-Նահանգները, գալոկ Անգլիայի շնորհաց ամենալայն ինքնավարութեան շնորհով է: Կարող ենք ասել, որ Գերմանիան էլ իր կլոնիաներից որևէ մէկին հանրապետական ազատութիւն տայ:

Գերմանիայում այժմ կոլոնիական քաղաքականութեան դեկավարները նոյն դասակարգերն են, ինչ էին անցեալ դարում Ֆրանսիայում. նրանք էլ այս վերջինների նման ապացուցեցին, որ անընդունակ են կոլոնիաներ հաստատելու գործում: Հուգենոտները հարիւր հազարներով գաղթեցին Ֆրանսիայից, բայց նրանցից և ոչ մէկը չըմտածեց Կանադա կամ Լուիզիանա գնալու, որտեղ այնչափ ֆրանսիական կոլոնիաների կարօտութիւն կար: Այդ երկրներում էլ նոյն բիւրոկրատները, դինւորները ու ճիզուիտներն էին թագաւորում, ինչ որ. Ֆրանսիայումն էին, և այդ բաւական էր Ֆրանսիայի գաղթականներին սարսափ ազդելու համար: Այդպէս էլ հիմա գերմանացի գաղթականները չեն գնայ այնպիսի երկիր վնդուելու, որտեղ միևնոյն պահեստի պարուչիկներին, լանդրատներին, ունտերօֆիցերներին ու հարկահաններին պիտի պատահեն, որոնց ձեռքից հենց նոր են փախել. նրանք կըզերադասեն աւելի Միացեալ Նահանգները կամ անգլիական կոլոնիաները: Իսկապէս մեզ խոկի էլ հարկաւոր չէ անցեալ դարից օրինակ վերցնել, համոզելու համար թէ միլիտարիզմը, բիւրոկրատիան ո՞ր աստիճան արգելքներ են հանդիսանում բանւորական կոլոնիաները զարգացնելու գործում: Մեր դարում Ֆրանսիան միևնոյն

պատուղներն է հաւաքում Ալժիրում, ինչ որ նա անցեալ դարում հաւաքեց Կանադայում: Չընայած որ Ալժիրը,— որտեղ Ֆրանսիացիները ընակութիւն են հաստատել 1830 թուականից,— չատ մօտ է գտնւում մայր հայրենիքին և ամեն միջոց գործ է դրւում կոլոնիաներ դրաւելայնտեղ (նամանաւանդ 1871 թ. էլզացիներին տեղափոխեցին այնտեղ), այնուամենայնիւ Ալժիրում եղող եւրոպացիների թիւը համեմատաբար մեծ չի կարելի համարել: 1871 թ. այնտեղ 250 հազար եւրոպացիներ էին հաշւում, 1896 թ. — 500 000, որոնցից կէսը Ֆրանսիացիներ են: Բայց այդ ընակիչները անկարող են իրանք իրանց գոյութիւնը պահպանել և դրա համար տեղին ծախսեր են հարկաւոր լինում: 1887 թ. Ալժիրի պետական հասոյթը 43, 7 միլ., իսկ ծախսը 120, 3 միլ ֆրանկ էր: Դեֆիցիտը մայր երկիրը պիտի ծածկէր: 1830 թ. մինչև հիմա Ալժիրը ֆրանսիական կառավարութեան 5 միլիարդ ֆրանկ է նստել: Այդ ծախսերով մէկ քառորդ միլիոն ֆրանսիացիներ են պահւել մայր հայրենիքի համար, դրանցից շատերն էլ պաշտօնեաներ են, որոնք կոլոնիական քաղաքականութեան պատճառով են միայն թողել իրանց հայրենիքը, ծովի միւս կողմը բախտ դանելու յոյսերով հրապուրւելով:

Ցաջողակ կերպով բանւորական կոլոնիաներ հաստատելու մասին մտածելուց առաջ, պէտք է նախ մայր հայրենիքում կառավարչական սիստեմը բարւոքել: Այդ նոյնչափ իրաւամբ կարելի է Գերմանիայի մասին ասել, որչափ և Ֆրանսիայի մասին:

Բայց կոլոնիաներ ձեռք բերելը,—ասում են—անհրաժեշտ է ոչ միայն գաղթականներին տեղ տալու համար, այլ և մայր հարենիքում արտադրւած աւելորդ ապրանքները վաճառելու համար: Իրրև թէ կոլոնիաները, այդ արտադրութիւնները ստանալու համար աւելի ապահով շուկայ են ներկայացնում և եթէ նրանք չըլինեն, մեր արտահանող արդիւնաբերութիւնը պէտք է բոլորովին կանգ առնի:

Արտահանութիւնը ընդարձակելու մասին հոգացող այս բարեհաճ խօսքերը փաստ ինչ կասկածելի են հնչում այն մարդոց շրթներում, որոնց ամբողջ եռանդն ու ջանքերը ուղղւած են արդիւնագործութիւնը երկրագործութեան շահերին զոհելու կողմը, որոնց համար գոյութիւն ունեցող բոլոր առևտրական դաշնագրութիւնները աչքի փուշ են երևում և որոնք բարձրաձայն մաքսային պատերազմի են հրաւիրում այն բոլոր երկրների դէմ, որոնք գերմանական արդիւնագործական արտադրութիւնների ամենալաւ սպառողներն են: Գնդել

թէ ֆրանսիական կամ գերմանական սիստեմով վարած կոլոնիական քաղաքականութիւնը նոր չուկաներ է բաց անում գերմանական արդիւնաբերութեան համար և արտահանութիւնը ընդարձակելու մի անհրաժեշտ միջոց է,— դա աւելի մեծ էապրպտութիւն է, քան այն, որ պնդում էին, թէ Անգրա-Գէկէնը ու Արևելեան-Աֆրիկան շատ յարմար երկրներ են գերմանական կոլոնիաներ հաստատելու համար:

Գերմանիայից արտահանուած արտադրութիւնից, — որոնց քանակութիւնը 1895 թ. 3.753,8 միլ, մարք է էր հասնում, —արևելեան Աֆրիկայում գտնուող գերմանական երկրների վրայ (Կամերուն, Տոգո և հարաւ-արևմտեան Աֆրիկայ) 5 միլ. մարկ էր ընկնում, Արևելեան Աֆրիկայի վրայ — 1.5 միլ., իսկ գերմանական Նոր Գվինէի վրայ էլ մօտաւորապէս 283,000 մարկ էր ընկնում:

Այսպիսով կոլոնիաները մի առաջին շոհաւէտ բան չեն ներկայացնում գերմանական արդիւնաբերութեան համար: Մինչդեռ այդ երկրների վարչութեան համար արուած պետական ծախսերը, 1897—1898 թուականների տոմարակալութեան համաձայն, 8,000,000 մարկի են հասնում, այսինքն՝ այդ երկրները ներմուծուած ամբողջ գումարից աւելի:

Բայց, դուրէ այդ նրանից է, որ մենք բաւականաչափ կոլոնիաներ չունենք: Եթէ որ խոշոր ձեռնարկութիւնները աւելի շոհաւէտ են: Շատ կարելի է, բայց ոչ թէ սահմանների ու լեռնանանների բէժիմի օրով: Ճիշտ է, անգլիական կոլոնիաները համարեա ամբողջապէս ծածկում են իրանց ծախսերը: 1892 — 1893 թուականների անգիական բիւջէում (աւելի նոր թուականներ չունենք ձեռք բերած) մենք կոլոնիաների վարչութեան համար արուած ծախսերի բաժնում գտնում ենք 132 300 ֆունտ ստերլինգ կամ 2 000 000 մարկ գումարը, որը Գերմանիայի, — ծանօթ գումարի մի երրորդ մասն են կազմում: Բայց Անգլիայից—իր կոլոնիաները արտահանած արտադրութիւնների գումարը 1892 թ. 1 400 միլ. մարկի էր հասնում, այն ինչ գերմանական արտահանութեան գումարը զէպի իր կոլոնիաները մօտաւորապէս 7 միլ. մարկ էր: Հիմայ մի այլ կոլոնիական պետութեան վրան աչք դարձնենք, որը Գերմանիայի նման ոչ թէ մանչեստրական, այլ զինուորական բիւրոկրատիական օլիգարխներով է զեկավարւում:

Ֆրանսիացիները այս վերջին 20 տարուայ ընթացքում շատ մեծ չափերով ռեսեցին անդրսկիանեան երկրներ դրաւել: Մենք արդէն տեսանք, թէ ինչպիսի յաջողութիւն ունեցան նրանք Ալժիրում: Բոլոր կոլոնիաները, բացի Ալժիրից, կառավարութեանը նստում են տարեկան կլոր հաշուով 70 միլիոն ֆրանկ: Սա մի չափազանց մեծ գումար է. Ֆրանսիական արտահանութիւնն էլ զէպի այդ կոլոնիաները մօտաւորապէս այդ գումարն է կազմում (1890 թ. ֆրանսիական արտահանութեան ընդհանուր—, 3 753 միլ. ֆրանկի գումարից 70 միլ. այդ կոլոնիաներն են ներմուծուած), սակայն 1885 թուականից զէսը —երբ այդ գումարը 100 միլ. էր հասնում,—արտահանութիւնը հիմա ընկած վիճակի մէջ է գտնում.

Եթէ այդ թուականները գերմանականից մեծ էլ են, այդուամենայնիւ նրանք շատ չնչին են արտահանութեան ամբողջ գումարի համեմատութեամբ: Կոլոնիաները բոլորովին չեն ազդում արտահանութեան վրայ, չնայելով որ ֆրանսիական արդիւնաբերները իրանց հայրենիքին պատկանող կոլոնիաներում օտարազգի մրցակիցների համեմատութեամբ նախանձելի իրաւունքներ են վայելում, ինչպէս օրինակ- մաքսերի ազատութիւնը և զանազան տեսակ կառավարչական հովանաւորութիւնները: Այս էլ ասելու է, որ Ֆրանսիայում կոլոնիական քաղաքականութեանը ուղղութիւն տուողներ աւելի են բիւրոկրատներ, զինուորականութիւնը և մանաւանդ խոշոր ֆինանսիաներն են, քան օրինակի համար Գերմանիայում: Այդ մարդիկը Ֆրանսիայի Տունիս, Տոնկին, Մադագասկար հասցրեցին, ի ցնծութիւն զօրքի ու նաւատորմիղի. կամ աւելի ճիշտ է ասել՝ ի ցնծութիւն զօրապետների, որոնք պատերազմում էին 1870 թ. պարտութեան արատը լրանց վրայից սրբելու ցանկութիւնից: Այդ դասակարգերը Ֆրանսիայում հիմա աւելի են թագաւորում, քան Գերմանիայում, որովհետև այն մանր բուրժուազիան ու գիւղական դասակարգը աւելի զօրաւոր են, իսկ խոշոր արդիւնաբերութիւնը աւելի քիչ է զարգացած, քան Հոգենզոլերների միւս կողմում: Պրոլետարիատի քաղաքական նշանակութիւնը այնտեղ շատ թոյլ է, նոյն իսկ նա չէ համապատասխանում երկրի արդիւնաբերական զարգացման աստիճանին, որովհետև, երկրորդ աւելի զուտակ չունենալու սիստեմի շնորհով, գիւղական դասակարգը և մանր բուրժուական աւերյալ բանուորական այժ չեն արտադրում, որոնք կարողանային արդիւնաբերութեանը նիրբեր: Այդ պատճառով էլ արդիւնաբերութիւնը իր բանուորական այժի պակասը լրացնելու

համար արտասահմանից է աշխատաւորներ բերում։ 1896 թ. օտարացիների թիւը միլոնից աւելի էր։ Այդ է պատճառը, որ արդիւնաբերական պրոլետարիատի մի նշանաւոր մասը Ֆրանսիայում քէարկելու իրաւունք չունի և քաղաքականապէս անզօր է։ Այսպիսով պարզւում է, թէ ինչու Ֆրանսիան, չընայելով իր հանրապետական կուսակցական կազմութեանը, Գերմանիայից աւելի յետադիմական է և թէ ինչու նրա կենսական սթերչների մաքսերը աւելի բարձր են ու նրա արդիւնաբերութիւնը, արտասահմանի հետ մրցելիս, աւելի է ճնշում։ «*Ազգային աշխատանքի հովանաւորութեան*», մաքսերի հովանաւորող և կոլոնիական ձեռնարկութիւնների քաղաքականութիւնը շատ ծանր նստեց արդիւնաբերութեան վրայ։ Բայց և հենց այդ քաղաքականութիւնն է սատկում, կարելին եղածին չափ, լայն մոնոպոլիա տալով ֆրանսիական արդիւնաբերութեան համար, գոնէ այնպիսի շուկայում, որտեղ այժ կայ, այսինքն՝ կոլոնիայում։

Ֆրանսիական քաղաքականութիւնը սատկում է անգլիային էլ իր կոլոնիաները ընդարձակելու և այդ ոչ թէ նոր երկրներ գրաւելու ձգտումից դրդուած, այլ լոկ ինքնապաշտպանութեան համար, որովհետև այդ միջոցով միայն նա կարող է մոնոպոլիայից ազատել այն երկրների մեծ մասը, որոնք դեռ ոչ գրաւուած են և ոչ էլ բաց են եւրոպական առևտուրի համար։ Անգլիայի գրաւած բոլոր երկիներն էլ բաց են ամբողջ աշխարհի արդիւնաբերութիւնների համար։ Եթէ այդ երկրներում հովանաւորող մաքսեր կան, դրանք նոյնպէս անգլիական արդիւնաբերութեան են վերաբերում,—կամ գոնէ վերաբերւում էին,—որչափ և միւս երկրների արդիւնաբերութեանը։ Ինչ փոփոխութիւններ էլ որ հիմա լինում են այդ ուղղութեամբ, դարձեալ ինքնապաշտպանութեան բնաւորութիւն են կրում, և Անգլիան սատկուած է իր կամքի հակառակ այդ փոփոխութիւնները մտցնել իր կոլոնիաներում, որովհետև այժմ բոլոր եւրոպական պետութիւնները մաքսերի հովանաւորող քաղաքականութեան են հետևում։

Իրերի այդ դրութիւնը Ֆինասիստների կողմից շահագործելը շատ բնական է։ Բայց և Բոդո ու ընկ. այնպիսի ժողովրդականութիւն ու յաջողութիւն չէին ունենայ Անգլիայում, եթէ եւրոպական պետութիւններից մի քանիսը չընդդէմ չարունակ նորանոր երկրներ գրաւել Աֆրիկայում ու մոնոպոլիա դարձնել. իսկ սև երկրի մի նշանաւոր մասը այդ բանից ազատելու և ազատ առևտուրի համար պահպանելու միակ միջոցը մնում է այն, որ բրիտանական կոլոնիա-

ները փութով ընդարձակեն։

Այն բոլոր ազգերի համար, որոնք համաշխարհային շուկայում մրցելու ընդունակ արդիւնաբերութիւն ունին, Ֆրանսիայի և Անգլիայի միջև կատարուող այս կատաղի մրցման մէջ, աւելի շահաւէտ է վերջինի յաջողութիւնը տեսնել։ Մինչև հիմա Գերմանիայի աննշան կոլոնիաների շնորհով յառաջ եկած վատ հետևանքներից մէկն էլ այն է եղել, որ դրանց պատճառով մի մի անգամ Գերմանիան ընդհարում է ունեցել Անգլիայի հետ Աֆրիկայում, ի մեծ ցնծութիւն ֆրանսիական հովանաւորիչների ու կոլոնիական քաղաքականութեան վարիչների։

Բայց այստեղ էլ, ինչպէս և ընդհանրապէս յաճախ լինում է կոլոնիական քաղաքականութեան ժամանակ, վաճառականութիւնից աւելի մեծ օգուտներ են սպասում, քան իրապէս ստացւում են։ Անգլիայից զատ, կոլոնիական քաղաքականութիւն վարող պետութիւններից և ոչ էլ մէկը Աֆրիկայից ոչինչ չէ ստացել, բացի դէֆիցիտը, պարտութիւնները ու բարքերի կոպտանալը։ Մինչդեռ Անգլիայի համար էլ Աֆրիկան շուկան շատ մեծ արժէք չունի, եթէ մի կողմը թողնենք Եգիպտոսը, որտեղ 1892. նա 3 միլ. ֆունտ ստերլինգի ապրանք էր արտահանել (իսկ Գերմանիան 1895 թ. համարեա 6 միլ. մարկի է արտահանել), և Կապի երկիրը, որ ոսկու և ադամանդի հանքերի շնորհով, նշանաւոր քանակութեամբ ապրանք է արտահանւում Անգլիայում (1892 թ.—8 միլ. ֆունտ ստերլ.) նոյնպէս և Գերմանիայից 1895 թ. — 13 միլ. մարկ։ Թէ ինչ նշանակութիւն ունին կոլոնիաները, բացի Ալժիրից, Գերմանիայի, Ֆրանսիայի արդիւնաբերութեան համար, այդ մենք արդէն տեսանք։ Թէ ինչ օգուտ ստացաւ Իտալիան իր Աֆրիկայում ունեցած արկածից, այդ էլ յայտնի է, դա նրա սնանկութիւնը միայն փութացրեց։

Իսկ Կոնգոն։ Դա շատ հեռու չէ Բելգիային սնանկացնելուց. և այդ էր պատճառը, որ դրա եռանդուն հիմնադիրը շտապեց իր ստեղծած կոլոնիական պետութիւնը իր հպատակների վրայ փաթաթել, չընայելով որ սրանք սասսիկ բողոքում էին այդ եղանակով «*պետութիւն ընդարձակելու*» դէմ։ Բելգիայից Կոնգո արտահանուած ապրանքների գումարը 1894 թ։ 6,240,000 ֆրանկի էր հասնում (իսկ այդ տարում Բելգիայից մէկ և կէս միլիարդ ֆրանկի ապրանք է արտահանուել։ Այդ պետութեան դէֆիցիտը, 1895 թ. նախահաշիւով, 4,400,000 ֆրանկ է կազմում։

Համարիա թէ բոլոր կոլոնիաներ հաստատող եւրոպական ազգերին Աֆրիկան միշտ աւելի անկման պատճառ է դառել, քան թէ զօրացրել է։ Ամենախոշոր ֆինանսիստները այդ պարագայում միշտ ջրից չոր են դուրս գալիս, բիւրոկրատները ու զինուորները իրանց համար ասպարէզ են գտնում այնտեղ, հրապուրելով դափնիներից ու շաղ ռոճիկներից, և եթէ նրանք զոհ չեն դառնում այնտեղի կլիմային ու բնիկներին, վայելուչ կիսաթոշակներ էլ են ստանում։ Իսկ եւրոպական կոնտինենտի արդիւնագործ դասակարգերին Աֆրիկայի կոլոնիաները այնպիսի չնչին օգուտ են բերում, որ մինչև իսկ նրանց համար արուած ծախսերն ու կրած ծանրութիւններն էլ չեն ծածկւում։

Մինչդեռ կարելի էր այնտեղ չնչին քանակութեամբ ապրանքներ արտահանել և այն ժամանակ, եթէ Եւրոպայում ազատ առևտուրի քաղաքականութեան շրջանը շարունակւէր առաջուան պէս։ Եւ այդ դէպքում թէ շատ աւելի քիչ զոհողութիւններ պէտք կըլինէր անելու և թէ այդ զոհողութիւններն էլ ամբողջապէս կըծանրանային այդ արտահանութեամբ հետաքրքրուող անձանց վրայ միայն։

V.

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԻՑԱԿԸ

Չինաստանը իրրև եւրոպական արդիւնաբերութիւնների սպառման վայր, անհամեմատ աւելի կարևորութիւն ունի, քան Աֆրիկայի այն նահանգները, որոնք կոլոնիական քաղաքականութեան նորագոյն ֆազիսում զբաղեցնում են ամենքին։ Արևելեան-Ասիայի հարցը, Աֆրիկայի հարցի համեմատութեամբ, բոլորովին տարբեր նշանակութիւն ունի եւրոպական արդիւնագործութեան համար։

1886 թ. մինչև 1890 թ. Չինաստան ներմուծուած ապրանքների արժէքը միջին թւով տարեկան 551 միլիոն մարկի էր հասնում, 1890 թ. — 672 միլիոն և 1893 թ. 680 միլիոնի էր հասնում։ Սակայն այդ վիթխարի պետութեան մէջ, — որի բնակիչների թիւը համարեա թէ ամբողջ Եւրոպայի բնակիչների թիւնէ հաւասարւում, (Երկնային Կայսրութեան բնակիչները 360 միլիոն են հաշւում, իսկ եւրոպացինը 380 միլիոն է.)— դեռ շատ քիչ տեղերում է թոյլ տրուած դրսից ապրանք ներմուծել։ Անկասկած է, որ այդ երկիրը մի շատ մեծ շուկայ պիտի դառնա ապագայում, և դա վերջին մեծ շուկան պիտի լինի կապիտալիստական արդիւնաբերութեան համար։

Ի հարկէ, չըպէտք է կարծել, թէ այդ շուկան չափազանց ընդարձակելու ընդունակութիւն կարող է ունենալ։ Եթէ մենք վերցնենք օրինակի համար Հնդկաստանը, որտեղ ժողովրդի սոցիալական յարաբերութիւնները միևնոյն են, ինչ որ Չինաստանում, բայց որտեղ հաղորդակցութեան միջոցները շատ աւելի են զարգացած ու բազմաթիւ երկաթուղիները (1853 թ. երկաթուղիները երկայնութիւնը 32 կիլոմետր էր, իսկ 1897 թ. մինչև 30,000 կիլ. էր հասնում,) հիանալի խճուղիները (250 000 կիլոմետր) չափազանց նպաստում են ներքին վաճառականութեանը, որտեղ ուրեմն հաղորդակցութեան միջոցները այնպիսի աստիճանի են հասել, որին Չինաստան մի-երկու տասնեակ տարիներից յետոյ հաղիւ կարողանայ հասնել, —մենք դարձեալ մեր սպասածի հակառակ պիտի տեսնենք, որ այդ երկրի մէջ տարեկան մօտաւորապէս 1,000 միլիոն մարկի արժողութեամբ միայն ապրանք է ներմուծւում 1886 թ. մինչև 1890 թ. միջին թւով ներմուծուել է 1034 միլիոն մարկի, 1892 թ. — 954, 1893 թ. — 1,106, 1895 թ. -- 992 միլիոն մարկի։

Հնդկաստանի բնակիչների թիւը 1891 թ. 291 միլիոնի էր հասնում, իսկ Չինաստանը 360 միլիոնի. կնշանակէ 70 միլիոնով կամ մօտաւորապէս 25 % աւելի, քան Հնդկաստանում։ Եթէ մենք հիմա, դրա համաձայն, մէկ քառորդով աւելացնենք Հնդկաստան ներմուծող ապրանքների քանակութիւնը, այն ժամանակ կստանանք այն գումարը — 1,200-ից մինչև 1,300 միլիոն մարկ, — որի արժողութեան համաձայն ապրանք պիտի ներմուծուէր Չինաստան, եթէ այնտեղ էլ հնդկական հասարակական կարգերը տիրապետէին։

Այդ կընշանակի որ երկաթուղիներ չունենալուց յետո, մի-երկու տասնեակ տարուայ ընթացքում Չինաստան ներմուծող ապրանքների քանակութիւնը կաւելանայ երկու անգամ։

Եթէ մենք հիմա ի նկատի առնենք, թէ որպիսի արագութեամբ աճելու ընդունակութիւն ունի մեր արդիւնագործութիւնը (համաչխա-

բային վաճառականութիւնը մէկ տարայ ընթացքում — 1879 թ. մինչև 1880 թ. — աճել է 4 000 միլիոն, իսկ 1888 — 1889 թ. 4·700 միլիոն մարկի արժողութեամբ) անշուշտ մի-երկու տասնեակ տարայ ընթացքում կատարելիք 600 միլիոն մարկի արտահանումը չի կարող մեծ յոյսեր խոստանալ:

Ի հարկէ, Հինդուստանը չէ կարելի այդպէս ուղղակի, առանց որևէ առարկութիւնների Հնդկաստանի հետ համեմատել, և շատ անյարմար բան կըլինէր այդ համեմատութիւնից ստացած թւանշանների հիման վրայ նախադուշակութիւններ ու եզրակացութիւններ անել: Այնուամենայնիւ այդ թւանշանները բաւական են, որ մենք շատ էլ մեծ ոգևորութեամբ չընդունենք Հինդուստանի դռները բացելու վրայ:

Այս ասածներիս պիտի աւելացնել և այն, որ չինական առևտրի ամենամեծ բաժինը Եւրոպային չէ որ կ'ընկնի. այնպիսի երկրներ կան, որ Հինդուստանին շատ ուշի մօտ են գտնւում քան Եւրոպան, ինչպէս օրինակ՝ Կալիֆորնիան և Աւստրալիան և մանաւանդ Եապոնիան ու Հնդկաստանը, որտեղ Հինդուստանի դռները բացելով, ամենից շուտ կզարգանայ արդիւնաբերութիւնն ու վաճառականութիւնը: Բրեմերհաֆէնից մինչև Հանկոնգ նաւերը գնում են 43 օրուան մէջ: Համբուրգից 50 օրուան մէջ. այն ինչ Սան-Ֆրանչիսկոյից ընդամենը 22 օրայ մէջ, Կոլոմբոյից (Ցեյլոնում) 11 օրայ մէջ. Աւստրալիայից մինչև Հինդուստան տարածութիւն նոյնչափ է, որչափ է Արևելեան Հնդկաստանից

Այնպէս չըպէտք է զարմանալ, որ մինչդեռ Գերմանիայից Հինդուստան արտահանուած ապրանքի քանակութիւնը 1890 թ. մինչև 1895 թ. աւելացել է 30 ից մինչև 35,5 միլիոնի, այսինքն՝ 18 %. Եապոնիայից արտահանուածը (չըհաշուելով Ֆորմոզայից արտահանուածները) աւելացել է 90-ից մինչև 96 թւականը 56 %, իսկ Արևելեան Հնդկաստանից արտահանուածը 123 %:

Բայց հեռու չէ և այն ժամանակը, երբ Հինդուստանը ինքը կըսկսի գործարանական ապրանքներ արտադրել:

Հենց հիմա էլ Հինդուստանում շատ զարգացած և աճող արդիւնաբերութիւն է նկատւում, որ, սակայն, մանուֆակտուրայի վրայ է կանգ առել, այսինքն՝ խոշոր մեքենայական արդիւնաբերութեան ճիշտ չէմ վրա:

Հինդուստանը դեռ առայժմ երկրագործական երկիր է: Գիւղական տնտեսութիւնը չափազանց մեծ տեղ է բռնում այնտեղ, իսկ

դա էլ դեռ շատ նախնական ձևերով է կատարւում ու կապած է անայնագործութեան հետ, որի արտադրութիւնները իրանց սեփական գործածութեան համար է սպառւում: Բայց դրա հետ մէկտեղ, քաղաքներում, նոյնպէս և գիւղերում, արդէն իսկ զարգացած արդիւնաբերութիւն էլ կայ, որ գիւղական տնտեսութիւնից դատելով, ինքնորոյն կերպով ապրանքներ է արտադրում: Բացի դրանից այնտեղ մասամբ էլ ծաղկում են արհեստները, մասամբ տնայնագործութիւնը մի քանի յատուկ ապրանքների վերաբերեալ, իսկ տեղ-տեղ էլ որտեղ մեծ ձեռնարկութիւններ կան, ծաղկում է և մանուֆակտուրան-աշխատանքի ամենամանր բաժանումներով: Սակայն վերջին մեծ քայլը դէպի մեքենական չինական արդիւնաբերութիւնը դեռ չէ արել. նա սառել կանգնել է իր համբարային կազմակերպութեան մէջ և հիմա անկարող է ինքնորոյն կերպով մի որևէ քայլ անել դէպի առաջ: Արդիւնաբերութեան զանազան ձևերը շատ անգամ իրարի զուգանիք աւանդւում են ընտանիքներում ժառանգաբար: Այդ բանը ի հարկէ, սաստիկ նպաստում է նրանց վիրին ասպիճանի ճարպիկ և ուշադիր աշխատաւորներ լինելուն, բայց դա նպաստում է և ժողովրդի ինքնուրոյնութիւնը կորցնելուն և հոգու հպատակութիւն է սովրեցնում նրանց. այդպիսով չինացիների ընտանեկան զաստիարակութիւնն ու արդիւնաբերական կարգապահութիւնը ձեռք ձեռքի տուած են ընթանում: Իսկ դրա հետևանքը այն է լինում. որ այդ ժողովուրդը, հասարակական յարաբերութիւնների քարացած վիճակի շնորհով, անընդունակ է դառնում իր ունեցած պարապմունքից դուրս ուրիշ կարգի աշխատութիւններով կեանքի միջոցներ հայթայթել իր համար:

Բայց Հինդուստանը, բացի բազմաթիւ վարժ աշխատասէր ու կարգապահ բանւորական ոյժից, արդիւնաբերութեան հում նիւթերի առատին հարստութիւններ էլ ունի, այսինքն՝ նա ունի այն բոլոր անհրաժեշտ պայմաններն, որոնց շնորհով կարող է, առանց պատմական միջանկեալ շրջանի վրայ կանգ առնելու, անցնել ուղղակի խոշոր արդիւնաբերական շրջանին: Հինդուստանի քարածուխի հանքերը առնասելի մեծութեան են հասնում: Ռիխտհոֆէնը դրանց քանակութիւնը 1,260,000 միլիոն տոնն է հաշուում: Այդ երկիրը հարուստ է նաև երկաթի հանքերով: Նամանաւանդ Զան-դի նահանգի վերաբերեալ Ռիխտհոֆէնը դեռ սրանից բսան տարի առաջ (իր Հինդուստանի մասին գրած գրքում, 1877 թ.) հարուստ կապիտալիստական ապագայ էր նախադուշակում: Նա կարծում է թէ հարաւ-Արևելեան անտրացիտա-

ին Զանգի նահանգը իր ածուխի, երկաթի հանքերի և բրուտի կաւի հարուստութիւնների շնորհիւ, ապագայում այնպիսի մեծ նշանակութիւն պիտի ստանայ, որ անհնար է հաշիւ առնել, որովհետև հարստութիւնները պարունակող լեռնալանջը գտնւում է անասելի խիստ բնակիչներով մի պտղաբեր հովիտների ճիշտ դիմացը, որտեղ թէ նաւագնաց գետեր կան և թէ շատ հեշտութեամբ կարելի է երկաթուղիներ անցկացնել, իսկ դրանք, ի հարկէ հանքերի նշանակութեամբ ամենանպաստաւոր պայմաններն են։ Այդ նահանգի ապագայի նշանակութիւնը նամանաւանդ մեծանում է այն հանգամանքի շնորհիւ,— նոյն ինկատի չառնելով այն, որ միաժամանակ շատ տեղերում էլ մեծ հանքեր են գտնւում,—որ որոշիալ հարստութիւնները գտնւում են այնպիսի մի երկրում, որ երկրագնդի բոլոր երկրներից թէ աւելի ածան, թէ շատ տոկուն և բանիմաց մարդկային բանուորական ոյժ ունի։ Չէ կարելի ի նկատի չառնել և այն, թէ արդիօք, ամեն շուկաների համար կարևորութիւն ունեցող քանի քանի արդիւնաբերական ճիւղեր պիտի կամաց-կամաց դարպանան չինական հողի վրայ և թէ ինչպիսի օգտակարութեամբ պիտի գործածուեն ամեն այդ բանուորական ոյժերը, որ հիմա մի տեսակ թագուն վիճակի մէջ են գտնւում։ Ինչպէս երևւում է, իրանք չինացիները շատ քիչ նախաձեռնարկութիւններ պիտի ունենան, բայց օտար կապիտալը չի ուշանայ օգտուել ընդհանուր շուկայի համար ածան կերպով ապրանքներ արտադրելու պատեհ առիթից։

Այսպէս ուրեմն, Չինաստանի գները բացելով Եւրոպայի արդիւնագործութիւնը շատ էլ չէ կարող մեծանալ, շուտով դրսից ստանալու փոխարէն, նա ինքը կոկսի ապրանքներ արտադրել ու մրցել Եւրոպայի հետ և այդպիսով, եւրոպական արդիւնագործութեան յոյս ու ապաւէնը լինելու տեղ. Չինաստանը մի կատարեալ պատիժ պիտի դառնայ նրա համար։ Եւ շատ հաւանական է. որ Չինաստանի մրցումը արդիւնագործութեան մէջ նոյնպիսի վիճակ կըստեղծի, ինչպիսին ստեղծեց անդրովային մրցումը Եւրոպայի գիւղատնտեսութեան մէջ։ Բայց արդիւնագործութիւնը չէ կարող ,գիւղատնտեսութեան նման իր վրայի ծանրութիւնները արդիւնաբերական միւս ճիւղերի վրայ գցել։ Խոշոր արդիւնագործութիւնը ամբողջ հասարակութեան բարեկեցութեան համար երկրի բոլոր արդիւնաբերական ճիւղերից ամենավճռական ճիւղն է կազմում։ Այն վայրկենին. երբ նա մշտական կրիզիսներ ունենալ սկսի, ինչպէս որ այժմ գիւղատնտեսութիւնն է մտել,

կապիտալիստական արդիւնագործութիւնը իր գոյութեան վախճանին կըհասնի։ Այդպիսով Չինաստանի մրցումը կարող է և այժմեան արդիւնաբերութեան սիստէմի անկումը արագացնող մի միջոց հանդիսանալ։

Բայց նա կարող է և չընպաստել սոցիալական շարժումի արագ զարգանալուն. նա կարող է նոյնիսկ կանգնեցնել այդ շարժումը, եւրոպական պրոլետարիատին նեղ վիճակի մէջ գցելով և այս վերջինի հաւանականութիւնն աւելի մեծ է, քան առաջինինը

Բիլիտոֆէլնը հետևայ կերպով է բնորոշում չինական բանուորին «չինացու մեքենայաբար աշխատելու ձիրքը դիւրութիւն է տալիս նրան իր սովորած ձեռագործական եղանակները ճարպիկութեամբ յարմարեցնել տեխնիկական արդիւնագործութեան բոլոր ճիւղերին։ Դրա հետ մէկ տեղ, չինացու ամեն բան շուտ սովորելու տաղանդը շատ շուտ է զարգանում, թէ յամառ նստակեաց կեանք վարելու ու չափազանց համբերատարութեան և թէ նրա ժուժկալութեան ու ամենաչնչին բանով գոհանալու ընդունակութեան շնորհով։ Այդ յատկութիւնները չինացուն այն աստիճանի են հասցրել, որ կատարելապէս գոհ է մնում և այն ժամանակ, եթէ իր կեանքի ամբողջ ընթացքում, միատեսակ ու անփոփոխ պայմանների մէջ, օր օրի վրայ միշտ միևնոյն աշխատանքն է կատարում։ Նա մարդկային բանուոր—մեքենայի կատարեալ իդէալն է ներկայացնում»։

Այդ դեռ բաւական չէ, ոչ միայն չինացին համբերութեամբ թոյլ է տալիս, որ իրան ավերջ կերպով մաշեն ծանր աշխատանքի տակ, այլ և շատ չնչին վարձատրութիւն է նա պահանջում դրա համար։ Նա բարձր կուլտուրայի պահանջներ չունի, իսկ իրան յատուկ ընկերական ընազդումների շնորհով, նա իր չնչին օրավարձով աւելի լաւ է կառավարւում, քան եւրոպական բանուորը։ Չընայած որ բազմաթիւ

մեծ քաղաքներ կան Չինաստանում. այդուամենայնիւ նրա բնակիչների մեծամասնութիւնը դեռ գիւղերումն է ապրում, որտեղ գիւղական համայնքը. չընայելով այլևս համայնական հողատիրութիւն չէ ճանաչում, դեռ էլի իրանից որևէ ընկերակցութիւն է ներկայացնում, որի անդամները ամենատերտ համերաշխութեամբ են կապուած միմեանց հետ։ Այդ ընկերակցութեան մէջ, ընկերների հետ միասին աշխատելը չինացին դեռ մանկութիւնից է սովորում, ճիշտ այնպէս, ինչպէս որ այդ անում են ռուսները իրանց արտէլների մէջ։

Այդ հանգամանքը չինացիներին զիւրութիւն է տալիս ամեն տեսակ տնտեսական ու քաղաքական կազմակերպութիւններ հիմնել. շատ հաւանական է, որ ոչ մի տեղ այնքան զօրաւոր ու գաղտնի ընկերութիւններ չկան, որքան Չինաստանում։ Այնպէս որ, եթէ այդ երկրում երբ երբեմն սկսել լինի, այդ վերոյիշեալ ընկերութիւնները կազմելու սովորութիւնը շատ մեծ ծառայութիւն պիտի մատուցանի սկսող շարժմանը։

Բայց այն բոլոր տեղերում, որտեղ չինացի բանւորը եւրոպականի վերաբերեալ ոչ թէ ընկեր, այլ մրցակից է հանդիսանում, միևնոյն ընկերակցութիւններ կազմելու սովորութիւնը, անշուշտ, շատ պիտի մնասի այս վերջինին։ Եւ մեզ թւում է, որ հենց այս վերջին գիրքի մէջ էլ մենք պիտի տեսնենք չինացուն մօտիկ ապագայում։ Այդ կարգի «կոմունիզմի» շնորհով, չինացիները արտասահմանում շատ շատ են համախմբւում ընկերովի ապրելու համար և մինչև իսկ մի տեսակ ընտանիք են կազմում, միասին ապրում, միասին ուտում են, իրանցից մէկին ընդհանուր ծախսարար են ընտրում և այլն։

Այդ կարգի ընկերակցութիւն մենք ուրիշ եւրոպական բանւորների մէջ էլ ենք տեսնում արտասահմանում, բայց դրանք ոչ այնպիսի կատարելութեան են հասցրած, ոչ այնքան երկար ժամանակով են տևում և ոչ էլ այնպիսի անպայման ժուժկալութիւն են պահպանում, ինչպէս որ չինացին է անում իր մի քանի սովորութիւնները, որոնք չինացու բնաւորութեան բնածին յատկանիշներն են։

Չինական բանւորական այժի ուժանութիւնը այն ժամանակ կերևայ, երբ չինական արդիւնաբերութիւնը կբսկսի մրցել եւրոպականի հետ. բայց նա կարող է իր այժը զգալ տալ և հենց եւրոպական բանւորական շուկայի վրայ, որանց հետ անմիջապէս մրցելով։ Երբ երկաթուղիների միջոցով Չինաստանի մէջին նահանգների գները կըբացուեն, դրա առաջին հետևանքը այն կըլինի, որ արդիւնագործ-

այդ ճիւղերը իրանց գոյութիւնը մինչև հիմայ պահպանել են պետութեան փակուած վիճակ ունենալու շնորհով միայն, որը հաղորդակցութեան լաւ ճանապարհներ չունենալու, երկրի ներսը մաքսեր պահպանելու և ամեն տեսակ խոչընդոտներ բանեցնելու հետևանքն է եղել։ Բանը նրանումն է, որ մինչև իսկ երկրագործական բնական արդիւնաբերութիւնն էլ այժ չունի եւրոպականի հետ մրցելու։ Կապիտալիստական խոշոր արդիւնագործութեան համար շուկայ ստեղծելու գլխաւոր միջոցներից մէկն այն է, որ այդ կարգի նախնական արդիւնաբերութիւնը քայքայի։ Չինաստանումն էլ այդ նախնական արդիւնաբերութիւնը պիտի անհետանայ, ինչպէս որ Ռուսաստանումն ու Հնդկաստանումն են անհետացել։ Այդ ժամանակ գիւղացին լոկ մի հողագործ կդառնայ, իսկ իրան պէտք եղած արդիւնագործական բոլոր իրերը նա վաճառանոցում կառնի։ Այդպիսով գիւղացու մէջ դրամի կարիք առաջ կըգայ, դրա հետ մէկտեղ կառավարութիւնն էլ կըզգայ այդ միևնոյն անախորժ կարիքը։ Մաքսային հարկերը նրան այլևս չեն գոհացնի, գիւղացիների վրայ դրամական տուրքեր կընչանակէին, որից յետոյ սրանք աւելի ևս փողի կարիք պիտի զգան։ Այդ ժամանակ գիւղացին ստիպուած կըլինի իր արդիւնաբերած հում նիւթերից ու իր կենսական պիտոյքներից աւելի ևս մեծ բաժինը վաճառքի հանել։ Չինաստանն էլ կըսկսի մեծ քանակութեամբ երկրագործական մթերքներ արտահանել, ինչպէս որ կապիտալիստական արշաւանքից տանջուող բոլոր երկրներն են անում։ Ուրիշ կերպ նա ինչպէս կարող է իր մէջ ներմուծուած ապրանքների գինը վճարել։ Միայն թէյն ու մեռաքսը բաւական չեն արտահանելու համար. նամանաւանդ որ թէյը—մշակւում է Չինաստանում 30° լայնութեան հարաւում միայն, իսկ մեռաքսի մշակութիւնն էլ պետութեան հարաւային մասումն է միայն ծաղկում։ Դրանց հետ մէկտեղ Չինաստանը ստիպուած պիտի լինի լայնութեան աւելի բարձր (աստիճանների) գիւղատնտեսական արդիւնաբերութիւններ էլ արտահանել, ինչպէս շաքար ցորեն և այլն։ Չէ կարելի առարկել թէ Չինաստանը, չափազանց շատ բնակիչներ ունենալու պատճառով, անկարող պիտի լինի շատ բան արտահանել։ Չինացիները, նոյն իսկ սովից մեռնելու ժամանակ էլ, կարտահանեն իրանց կենսական մթերքները, ինչպէս որ արտահանում էին մեռնող իրլանդացիները և ինչպէս որ այժմ էլ անում են ռուս և հնդկացի գիւղացիները, իսկ Հնդկաստանն էլ նոյնպէս խիտ բնակիչներ ունի, ինչպէս և Չինաստանը։ Չինաստանում իսկապէս մէկ

քառակուսի կիլոմետրի վրայ 86,9 բնակիչ է ընկնում, այն ինչ բրիտանական Հնդկաստանում 88,5 բնակիչ է ընկնում, կընշանակէ դեռ մի քիչ էլ աւելի է:

Միևնոյն շոգենաւերն ու երկաթուղիները, որոնք Չինաստան են բերում և նրա զանազան ծայրերն են տանում բամբակի ամեն տեսակ ապրանքներ--ըէյլներ, լոկոմոտիւներ ու ամեն կարգի մեքենաներ, վերադարձած միջոցին ոչ միայն մետաքսով, թէյով ու բամբակով կբեռնաւորուեն Եւրոպա տանելու համար, այլ և ամեն տեսակ հացահատիկներով: Իսկ դա Եւրոպայի գիւղատնտեսութեանը բոլորովին ձեռնտու բան չէ:

Սակայն եւրոպական գիւղատնտեսութեան անկման հետ Չինաստանի գիւղատնտեսութիւնն էլ շատ թշուառ վիճակի մէջ պիտի ընկնի, Ռուսաստանն ու Հնդկաստանը այդ տեսակէտից ամենալաւ օրինակներ են ներկայացնում:

Դրամական տնտեսութիւնը օդն է ցնդեցնում հին, գեղջուկային անարատութիւն պահպանող գիւղատնտեսութիւնը. գիւղական տնտեսութեան հետ գիւղն են մտնում վաշխառուն ու հարկահանը: Գիւղական բնակիչները ահագին խմբով թողնում են իրանց պապենական հողը և տեղափոխւում քաղաքները, այնտեղի պրոլետարիատի թիւը բազմացնելու, որ առանց այն էլ օր ըստ օրէ բազմանում է, արդիւնագործութեան հին ձևերի քայքայւելով:

Այս էւոլիւցիան արդէն վաղուց է սկսել: Երկաթուղիների շինելը պիտի շտապեցնի նրան ու նրանից ծագող հետևանքները: Մի քանի նաւահանգիստների դռները բացւելով, արդէն ահագին թւով չինացիներ գաղթեցին և եթէ երբևիցէ այդ երկիրը երկաթուղային ցանցով ծածկւի, այդ գաղթականութիւնը աւելի մեծ ծաւալ կստանայ: (Կուլին) արդէն բախում է Եւրոպայի դուռը և, ինչպէս որ քառասնական թւականներին իրլանդացիների գաղթականութիւնն էր սպառնում, անգլիական բանւոր դասակարգային կռիւը թուլացնելը, այնպէս էլ այժմ մոնղոլների արշաւանքն է սպառնում ամբողջ եւրոպայի բանւոր դասակարգին:

Վտանգը լուրջ է: Հարկաւոր է միայն կարդալ Կարլէյլի ու Էնգէյլսի գրածները, թէ ինչպիսի նեղութիւններ էին կրում անգլիական բանւորները իրլանդացիների գաղթականութեան պատճառով, և դուք իսկոյն կրհասկանաք, թէ ինչ նշանակութիւն կարող է ունենալ չինացիների մեծ թւով դէպի դուրս գաղթելը, այժմեան պրոլետարիատի համար:

Բայց որչափ էլ մեծ չըլինի այդ վտանգը, այնուամենայնիւ չը պէտք է չափազանցել նրա նշանակութիւնը: Քանի որ Չինաստանի դռները բացւելով գլխաւորապէս օգուտ քաղողը Եւրոպան չէ լինելու, ուստի նրա գաղթականութեան մեծ մասն էլ Եւրոպային չի հասնի: Չինացիները ամենից աւելի պիտի հեղեղեն այն երկրները, ուր հիմա էլ նրանք արդէն գնում են. այն է՝ Հնդկաստան, Զոնդիան կղզիները, Սիբիր, եթէ օրենքով նրանց չեն արգելի, Աւստրալիա ու արևմտեան Ամերիկա:

Իսկ եթէ այդ գաղթականութիւնը մինչև Եւրոպա հասնի ու մեծ ծաւալ ստանայ, այն ժամանակ միմիայն պրոլետարիատին չէ, որ վտանգ կրսպառնայ: Մեզ համար շատ խրատական դաս կարող է ծառայել չինացիների դէպի Միացեալ-Նահանգները գաղթելու պատմութիւնը: Չինացիները անտեղ գալիս էին ոչ միայն իրրև օրավարձով աշխատողներ, այլ և իրրև ինքնորոյն արհեստաւորներ ու անկախ երկրագործութեամբ պարապող գիւղացիներ: Այդպիսով նրանք մրցակիցներ էին հանդիսանում« *միջին դասակարգին* »: Բայց դրանով էլ խնդիրը չէր վերջանում: Վաճառականական ու վաշխառուական կապիտալը արդէն շատ զարգացած է Չինաստանում: Արժանահաւատ զեկուցանողները մեզ մի չինական Ռոշիլդի մասին են պատմում, որ 100 միլիոն ֆրանկի անշարժ կարողութիւն և բազմաթիւ կրպակներ ունի, եւրաքանչիւրը 10, 12, մինչև իսկ 20 և 30 միլիոն արժողութեամբ:

Մանդարինական տնտեսութիւնը, որ մեծ արգելքներ է ընդհանուր տնտեսութեան զարգանալուն, վաճառականին էլ շատ է ճնշում և չէ թոյլ տալիս ազատ կերպով արդիւնագործական ձեռնարկութիւններ անել: Այդ իսկ պատճառով, չինացի վաճառականը հաճութեամբ է գաղթում և այն երկրում, ուր նա տեղափոխւում է, եւրոպական կապիտալիստի ամենավտանգաւոր մրցակիցն է դառնում: Այսպէս օրինակ՝ չինացի վաճառականների մի ընկերութիւն կար, որ սկզբում չինացի բանւորներին Կալիֆորնիա տեղափոխելով էր զբաղւում:

Ցեռոյ, հենց որ այդ ընկերութիւնը հաստատ դիրք վաստակեց երկրում, նա այլ ևս իր հարենակիցներին տեղափոխութեան միջոցին շահագործելով չըբաւականացաւ: Նա փորձեց իր շահագործութիւնը ովկիանոսի միւս կողմն էլ տարածել և, քանի որ նա բանւորին աւելի լաւ էր ճանաչում, իսկ այս վերջինը վաղուցայնից արդէն այդ վաճառականների չըվճարող պարտապանն էր, ուստի այս գործում չինացիները իրանց եւրոպացի մրցակիցներից աւելի մեծ յաջողութիւն ունեցան: Այդպիսով, եթէ սկզբներում չինացիները գործարաններից դուրս էին վանում սպիտակ բանւորներին միայն, շուտով սկսեցին դուրս վանել այնտեղից և սպիտակ ձեռնարկողներին:

Սարտորիյ Ֆոն-Վայլտերսհաուզէն այսպէս նկարագրեց այդ երևոյթը իր «Ամերիկայի Միացեալ-Նահանգներում գտնւող չինացիների մասին», հետազօտութեան մէջ (Tubingener Zeit schrlft. 1883).

«Քնենք, օրինակի համար, ծխախոտի և պապիրոսի արտադրութիւնը: Ցիսնական թուականներին ու վաթսնական թուականների սկզբներում մօտ հինգ հարիւր սպիտակ բանւորներ կային Սան Ֆրանցիսկո, որոնք Կալիֆորնիայի ծխախոտի մշակութիւնով էին պարապում: Ցեռոյ այդ դրութեան տէրերը սկսեցին չինացի բանւորներ աշխատեցնել:— Դրա առաջին հետևանքն այն եղաւ, որ այն հինգհարիւր սպիտակ բանւորները— մեծ մասամբ գերմանացիներ,— զրկուեցին իրանց աշխատանքից: 1876 թ. այդ բանւորներից միայն հարիւրն էին մնացել: Երկրորդ հետևանքն այն եղաւ, որ չինացիները այդ գործը մի լաւ սովորելուց յետոյ, գործարանական արդիւնաբերութիւնը թողնելով, սկսեցին տնային եղանակով պարապել այդ գործով և գիշեր ցերեկ Չինատովն (քաղաքի այն քառորդ մասն է, որտեղ չինացիներն են ապրում) նկուղներում հարիւներով աշխատելով, սնանկացրին ամերիկական մանր արդիւնաբերողներին, իրանց վերջին ծայր ինայողութեամբ ապրելու շնորհով: Դրանից յետոյ չինացի կապիտալիստները աւելի մեծ հիմունքների վրայ դնելով իրանց արդիւնագործութիւնը և այդպիսով եօթանասնական թուականների վերջում, ինչ էր մնում, որ ամերիկական խոշոր արդիւնաբերողների հացն էլ կտրէին նրանք:

«Ճիշտ Էլինոյնը պատահեց և կօշիկների արդիւնագործութեան մէջ, որ 1874 թուականին շատ ընդարձակ հիմունքների վրայ էր դրուած Սան-Ֆրանցիսկոյում... 1879 թ. բոլոր հողաթափերը, երախտ-

սերի և կանանց համար պատրաստուած բոլոր կօշիկների երկու երրորդ մասը և նոյնչափ էլ գիւղական ժողովրդի գործ ածած սովորական կօշիկները չինացիներն են արտադրում:

«Միևնոյն տեսակ փորձեր եղան և միւս հագուստեղէնների վերաբերեալ, ինչպէս օրինակ՝ շապիկների, բրթէ ու բամբակէ ճերմակեղէնների գործարաններում, դերձակների արհեստանոցներում և բոլոր այն տեղերում, ուր որ մեծ քանակութեամբ էին ապրանք պատրաստում:

«Արդիւնագործութեան միւս ճիւղերում մրցումը խիստ լինելու շնորհով, նրանք սկսեցին ուղղակի դուրս վանել ամերիկացիներին,- այդպէս եղաւ, օրինակ բրդի մանարաններում, ջուլհակի գործարաններում, ճոպան պատրաստելու տեղերում, սիգարի արկղների արհեստանոցներում, սապոնի լուցկիի գործարաններում, լուցարաններում և ուրիշ շատ տեղերում:

Մանր ու խոշոր վաճառականներն էլ շատ էին վնասւում չինացիների մրցումից: Առաջինները մանրավաճառ չարչիներից. իսկ վերջինները նրանից, որ չինացի վաճառականները հետզհետէ իրանց ձեռքն էին գցում Չինաստանի վաճառականութիւնը: Հենց այդ պատճառներն էին, որ ստիպեցին Միացեալ-Նահանգների կոնգրեսին 1882 թ. օրէնքով արգելել չինացիներին Ամերիկայ գաղթելու, իսկ 1892 թ. այդ օրէնքը աւելի խստացրին նրանք:

Դոյնանման օրէնքներ Աւստրալիայի մի քանի պետութիւններն էլ են հրատարակել:

Սակայն այդ բոլոր արգելքները կարողացան չինացիների գաղթելու առաջն առնել միմիայն ծովի կողմից: Չէ որ Կանադան ու Մէքսիկան կից են Միացեալ-Նահանգներին ու չեն արգելում չինացիներին իրանց երկիրը գաղթել: Եւ ցամաքային սահմանների ընդարձակութեան ու ամերիկական պաշտօնեաների կաշառակերութեան շնորհով շատ հեշտութեամբ են կարողանում չինացիները այդ երկրներից անցնել Միացեալ-Նահանգները: 1890 թ. Միացեալ-Նահանգներում գտնւող չինացիների թիւը պաշտօնական ստատիստիկան 107,000 էր հաշւում, իսկ Նիւ-Եօրկի նաւահանգիստի նախկին չինական վերատեսուչ Թոմաս Զարֆը նրանց թիւը 700,000 է հաշւում, որոնցից 150,000 միմիայն Կալիֆորնիայումն են ապրում:

Հարկաւոր է Եւրոպայումն էլ այդ օրինակ փորձեր անել: Չինացիների ծովային ճանապարհներով դէպի Եւրոպա գաղթե-

լուց շատ չըպէտք է վախենալ։ Բայց Ռուսիայի Չինաստան մտնելը և Սիբիրի երկաթուղին չինելը չինացիների առաջ ցամաքային Ճանապարհ բաց կանեն դէպի Եւրոպա։ Եւ Ր. Ե. Մէյը շատ ճիշտ է ասում իր «տնտեսական զարգացման տեսութիւն» յօդուածում, թէ՝ «խնդիրը կսկսի նրանով, որ նախ Չինաստանի դռները կըբացուին Ռուսաստանի առաջ, իսկ կըվերջանայ նրանով, որ յետոյ Ռուսաստանի դռները կըբացուին բազմամարդ Չինաստանի առաջ։»

Այդպիսով, շատ հաւանական է, որ չինական գաղթականութիւնը Եւրոպա էլ հասնի։ Եւ եթէ այստեղ էլ այդ սաստիկ զգալի դառնայ, այն ժամանակ դրանից վնասուողները ոչ միայն օրավարձով աշխատող բանւորները կըլինին, այլ և այն դասակարգերը, որոնք պետութեան հիմքն են կազմում և որոնց պաշտպանութիւնը շատ կարևոր է պետական մարդոց համար. ուրեմն, այդպիսի գաղթականութեան հետևանքն այն պիտի լինի, որ Եւրոպայումն էլ միևնոյն միջոցները ձեռք կառնուին, ինչ որ արդէն ձեռք են առել Միացեալ Նահանգներում ու Աւստրալիայում։ Յետոյ եթէ այդ բոլոր արգելքները անզօր լինին չինական գաղթականութեան առաջն առնելու, այն ժամանակ ամենից աւելի չինական արշաւանքից պիտի վնասուեն մանը արհեստաւորները, վաճառականները և գիւղացիները։ Իսկ բանւոր դասակարգից ամենից առաջ կըվնասուեն ամենապահպանողական տարրերը՝— տնային արհեստներով պարապողներն ու գիւղական բանւորները։ Եւ նախնական «դեղին սարսափը» կըսկսի անհամեմատ աւելի մեծ բանւորական կազմակերպութիւնների մէջ, նա կըսթափեցնի քնից այդ պահպանողական տարրերին։

Այն ժամանակ հասարակութեան այդ կարգի անդամները կըհասկանան, որ կուլիների մրցումից ազատուելուց միակ միջոցն այն է, որ կարելի՛ն չափ շուտով վերջ դրուի այժմեան, մրցման վրայ հիմնուած, տնտեսութեանը և փոխուի արդիւնաբերական ներկայ սիստեմը։

Այդպիսով եօթանասնական թուականների վերջերում, երբ չինական հարցը այրող խնդիր դարձաւ Կալիֆորնիայում, այնտեղի մի բանւորական կուսակցութիւն յանկարծ այնպէս զարգացաւ ու այնպիսի զօրութիւն ստացաւ, որ 1878 թ. մինչև իսկ պետական ընտրութիւնների ժամանակ մեծամասնութիւն վաստակեց, թէև իր անկանոն ու մանր բուրժուազիական բնաւորութեան շնորհով այդ կուսակցութիւնը չըկարողացաւ երկար ժամանակ կանգուն մնալ։

Միևնոյն ժամանակ չըպէտք է մոռանալ և այն որ

Չինաստանում, կապիտալիստական արդիւնագործութեան սկսելով՝ բանւորական շարժում էլ կըսկսի և բանւորների մէջ աւելի մեծ «պահանջները» կըզարթեն։ Չինացին իր հայրենիքում միշտ այնպէս խեղճ ու համբերող չէ, ինչպէս որ արտասահմանում գիտեն, արտասահման գաղթողները ընդհանրապէս թշուառներից ամենաթշուառներն են, որոնք կամ պայմանով և կամ պարտքի համար գերի են դարձած. բացի դրանից, արտասահմանում, թշնամաբար վերաբերուող ազգերի շրջանում, նրանք սաստիկ օտար են զգում իրանց։

Թէև Միացեալ-Նահանգներում քիչ չէ պատահում, որ չինացիները գործադուլ անեն, բայց իրանց հայրենիքում նրանք աւելի մեծ յանդգնութիւն են ցոյց տալի։ Դրան պէտք է աւելացնել և վերևում յիշած նրանց ընկերակցական համերաշխութիւնը, որի շնորհով նրանք աւելի հեշտութեամբ կարող են լաւ կազմակերպութիւններ ունենալ։

Թէ ինչպէս կապիտալիստական արդիւնագործութեան հետ մէկտեղ շուտ է զարգանում դասակարգային կռիւը,— այդ մեզ ցոյց է տալիս Եսպանիան, որտեղ արդէն մի մեծ բանւորական շարժում է սկսել։

Այնպէս որ, ի նկատի առնելով Չինաստանում տիրող իրերի ներկայ կացութիւնը, պէտք է հաստատ, որ երկաթուղիների շինելով այնտեղ բանւորական մեծ շարժումը աւելի շուտ կըսկսի, քան թէ կըկարողանա մի զօրաւոր բանակ ու կարգապահ բիւրոկրատիա ստեղծել։

Իսկ որչափ մեծ լինի բանւորական շարժումը Չինաստանում, այնքան էլ անհնարին կըլինի մոնգոլների արշաւանքի վտանգը Եւրոպայի համար։

Ի հարկէ, հիմա անհնարին է ասել, թէ ինչ վերջնական ձև կըստանան այս բոլոր, միմեանց պայմանաւորող,— մի տեղ իրարու ոյժ տուող, իսկ միւս տեղ միմեանց հակասող,— հոսանքները։ Որչափ էլ պարզ չ'երևակայենք այդ հոսանքների էութիւնը, նրաց կապանքներից ազատող համեմատական զօրութիւնն ու զարգացման արագութիւնը, այդուամենայնիւ մենք միմիայն ենթադրութիւններ կարող ենք անել։

Սակայն որոշ կերպով մենք կարող ենք ասել հետևեալը.

Պէտք չէ չափազանց յոյսեր տածել, թէ Չինաստանի դռները բացելով, Եւրոպայի տնտեսական վիճակը կըբարեփոխուի, այդպիսի

բարեփոխութիւն աւելի շուտ տեղի կունենայ երիտասարդ. տնտեսապէս նոր զարգացող երկրներում. քան Եւրոպայում։ Այն ինչ Չինաստանի բացիլը մեծ վտանգներ են խոստանում Եւրոպային, անդրովկիանեան մրցումը պիտի սատակնայ բանուորների կենսական պիտոյքների հաշվին, որովհետև չինական լ ոչոր արդիւնագործութիւնը շուկայում եւրոպականից աւելի ցածր գներ առաջարկելու ընդունակ լինելով, եւրոպացի արդիւնագործներն էլ պիտի աշխատեն ածան բանուորներ ունենալ։ Հետևապէս եւրոպական բանուորներն ստիպուած պիտի լինեն կրճատել իրանց պիտոյքները՝ մի կողմից չինական աւելի ածան արդիւնարերած ապրանքների մրցման, իսկ միւս կողմից՝ բարձր կուլտուրայի պահանջներից զուրկ ու զիմացկուն չինացի բանուորների զաղթականութեան ազդեցութեան տակ։ Իսկ եթէ եւրոպական բանուորները չուզենան իրանց պահանջները կրճատել, այդ պարագայում էլ գոնէ ուժասպառ լինելու են նրանք իրանց պահանջները բարձր պահելու համար մղած անվերջ կռիւների մէջ։

Այս վտանգների մեծ թէ փոքր լինելու մասին կարելի է վիճել։ Բայց որչափ էլ նրանք չափազանց լինեն, դարձեալ չեն արգելի Չինաստանի դռները բանալուն։ Այդ դռների բացիլը կապիտալիստական արդիւնաբերութեան ներկայ սիստեմի համար անհրաժեշտ բան է դառել և կապիտալիստ դասակարգը պիտի ջանայ, որ այդ սմենամեծ, մինչև հիմա դեռ փակ մնացած շուկայի դռները բացուեն իր առաջ,— և նա կըբանայ։

Վ. Ե Ր Ջ

Դիմել Ատրպատականի Թէմական տպարան կամ Թիֆլիս Կենտրոնական Գրավաճառանոց:

ԳԻՆՆ Է

Երկոտ դոսա

Կամ 40 կոպեկ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0202176